2024, ՄԱՐՏ Բ, ԹԻՎ 6 (650)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԼԻ Ի ՄԵՌԵԼՈՑ. ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարության տոնի առիթով

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զսուրբ եւ զհրաշալի եւ զյաղթող զյարութիւնդ Քո օրհնեմք եւ փառաւորեմք»
(Ժամագիրք):

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության ավետիսն է հնչում այսօր մեր եկեղեցիների սուրբ խորաններից: Սքանչելախորհուրդ ավետիսը հույսով ու հոգենորոգ զգացումներով է պարուրում հայրենիքի ու ազգային կյանքի ցավերով ու կորուստներով դառնացած մեր սրտերը: Կյանքը հաղթանակել է, մահը պարտվել ու խորտակվել: Հավատքով ու առ Աստված ապավինությամբ միասնաբար օրհնաբանենք Տիրոջը ժամասացի խոսքերով. «Սուրբ և հրաշալի և հաղթող Քո Հարությունը օրհնում ենք և փառավորում»:

Քրիստոս Իր Հարությամբ մարդկությանն ազատել է չարի իշխանությունից, ցույց տվել ներման և սիրո ճանապարհը, հաշտություն հաստատել մարդու և Աստծո միջև և ընծայել հավիտենական կյանքի հույսն ու շնորհը: Աստվածորդու ողորմածությամբ կյանքի արշալույսն է տարածվել մահվան խավարի վրա: Կենարար խաչը, որի վրա հեղվեց Տիրոջ Սուրբ Արյունը, մահվան հանդեպ հաղթության նշան է դարձել, Հարության հավատը՝ չարին պարտության մատնելու երկնապարգև ուժ:

Այո՛, սիրելիներ, հաղթող է, սուրբ և հրաշալի Քրիստոսի Հարությունը: Աշխարհի հարափոփոխ իրադարձությունների և հատկապես բարդ ու դժվարին իրավիճակների մեջ Հարության շնորհներով հավատացյալները զորանում են՝ վեր հառնելու փորձություններից, մերժելու կորստաբեր երևույթներն ու կործանարար մտածումներն ու գործերը, հաղթահարելու աղետաբեր պատերազմների արհավիրքները, նորոգվելու Տիրոջով, ինչպես որ Սուրբ Գիրքն է վկայում. «Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է» (Բ Կորնթ. Ե 17):

Համայն մարդկությանն այսօր էլ հնչում է հրավերը առաջնորդվելու աստվածադիր պատվիրաններով, մահվան հանդիման կերտելու կյանքի հաղթանակը, անվեհեր պաշտպանը լինելու ճշմարտության ու արդարության և առանց Աստծո մեռյալ գոյությունը փոխարինելու Տիրոջ հետ հարուցյալ կյանքի: Այս կոչին ականջալուր, «վասն հավատո, վասն հայրենյաց» սրբազան ուխտով միաբանված՝ պատմության հոլովույթներում դիմակայել ենք բազում դժվարությունների ու փորձությունների: Հարության հավատի վկայությունը նաև մեր օրերում հռչակումն է մեր ժողովրդի դավանանքի և ազգային սրբազան արժեքներին հավատարմության, որոնք դարեր շարունակ երաշխիքն են եղել հայոց ազգի ինքնության ու լինելության, դպրության ու գիտության զարգացման: Հարկ է այս արժեքներով սերունդներ կրթել և անաղարտ ու անկորուստ պահպանել մարդկության գիտամշակութային գանձարանը հարստացրած մեր նախնյաց ավանդներն ու ժառանգությունը:

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ ի Հայաստան և ի սփյուռս, Տիրոջ Սուրբ և Հրաշափառ Հարությունը գոտեպնդող խրախույս է ամենքիս հույսով ու արիությամբ դիմագրավելու մեր երկրի առջև ծառացած մարտահրավերները՝ հատկապես հետպատերազմյան այս ծանր շրջանում, երբ բռնազավթված ու հայաթափված է Արցախը, և չեն դադարում Ադրբեջանի ծավալապաշտական ու սադրիչ գործողությունները նորանոր պահանջներով, որոնք անմիջական սպառնալիքներ են ստեղծում մեր պետության անվտանգությանը: Հանցագործ դրսևորումներով շարունակվում են Արցախի պատանդառված քաղաքական ղեկավարության և անօրինաբար գերության մեջ պահվող մեր զավակների նվաստացումները, ինչպես և արցախահայության իրավունքների անտեսման, Արցախում հայկական հոգևոր-մշակութային ժառանգության յուրացման ու ոչնչացման անթաքույց քաղաքականությունը: Դատապարտելի այս իրողությունների հանդիման մեր ժողովրդի սեպուհ պարտքն է հաղթահարել ներազգային տարաձայնություններն ու անմիաբանությունը, լծվել ծանր կորուստներ կրած մեր ազգի վերքերի ամոքմանը և կարողությունների մեկտեղմամբ հայրենիքի հզորացմանը: Հարուցյալ կյանքը, հիրավի, սկսվում է քրիստոսավանդ պատգամներով ապրելու վճռականությամբ, արհավիրքներից ու տառապանքներից դեպի կենսանորոգ ձեռքբերումներ առաջին քայլից: Այս գիտակցությունը, այս ոգին պիտի աննկուն պահենք մեզանում, չընկրկենք մեզ պատուհասած փորձությունների դիմաց, չգործենք պարտվողական հոգեբանությամբ և չվերածվենք վիատված ու տկար ազգի՝ վտանգելով մեր հայրենիքի ապագան և անկախ պետականությունը: Մեր ընթացքը չի վերջանում մեր մարտիրոսների ու քաջորդիների նահատակության վայրերում և ոչ էլ Արցախում թողնված շիրիմների մոտ: Չարի կողմից մեզ համար փորված գերեզմանը բոլոր ժամանակներում թափուր է մնալու, քանզի մենք Քրիստոսի հետ նեղությունները հաղթահարող և ամեն գողգոթայից հարության հավատքով հառնող ժողովուրդ ենք: Արդարև, մեր ապագայի վերաբերյալ վճիռը խավարինն ու մահվանը չէ, այլ կյանքինն ու հարությանը: Աստծո հետ հզոր հավատքով, անընկճելի կամքով ու ոգով վերհառնել կարող է ոչ միայն անհատը, այլև ազգն ու պետությունը: Մեր ժողովրդի համար ներկա բարդ պայմաններում կենսական և հրամայական է մեր երկրի հզորացումը, կենսական է ապրել ու գործել անսակարկ հայրենասիրությամբ ու ազգանվիրումով: Այս հաստատակամ ընթացքով կարող պիտի լինենք կերտելու նոր հորիզոնները մեր պատմության և վերազարթոնքը պետական, ազգային-եկեղեցական մեր արժանապատիվ կյանքի: Այսպես իրականություն պիտի լինի առաքյալի բացականչությունը նաև մեր ժողովրդի համար. «Ո՞ւր է, մահ, քո հաղթությունը, ո՞ւր է, գերեզման, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55): Արդ, վառ պահենք մեր սրտերում առ հարուցյալ Քրիստոս մեր հավատը, հույսն ու սերը, գալիքի բարի ակնկալությունը: Աստված մեզ կոչում է հարության, ուստի թոթափենք մեզանից երկյուղն ու հուսահատությունը, հեռացնենք մեզանից ատելությունն ու թշնամանքը, պիղատոսյան ու հուդայական գործելակերպը, մեր աչքերը հառնենք հարուցյալ Փրկչին և ընթանանք միմիայն հարության հաղթական ճանապարհով:

Այս մաղթանքով և Սուրբ Հարության ավետիսով ողջունում ենք մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին, քույր Եկեղեցիների հոգևոր Պետերին՝ հայցելով Ամենակալ Աստծո զորակցությունը իրենց առաքելության արդյունավորման մեջ: Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգևոր դասին և հավատավոր համայն Մեր ժողովրդին ի հայրենիս և ի սփյուռս:

Սիրելիներ, Սուրբ և Հրաշափառ Հարության տոնի այս լուսառատ օրը մեր սրտերից աղոթք բարձրացնենք առ ամենակալն Աստված, որ աշխարհին պարգևի խաղաղություն ու բարօրություն, Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանին տարածյալ պահի մեր հայրենիքի վրա և օրհնի ու երկնահեղ շնորհներով պայծառացնի ազգս հայոց՝ ապրելու ապահով ու անվտանգ կյանքով և փառավորելու Ամենասուրբ Երրորդությանը այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ծաղկազարդի տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մարտի 24-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը՝ Ծաղկազարդը:

Տոնը տարիներ առաջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հռչակվել է Մանուկների օրհնության օր:

Այս կապակցությամբ Առավոտյան ժամերգության ավարտին Մայր Աթոռի շրջափակում Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Անդաստանի արարողություն և մանուկների օրհնության կարգ:

Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց Մայր Աթոռում համախմբված մանուկներին, իսկ հավատացյալներին բաժանվեցին Անդաստանի ընթացքում օրհնված ուռենու ճյուղերը:

Բերկրաշատ տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Պատարագիչն էր Գևորգյան հոգևոր ճեմարանի

ասպիրանտուրայի բաժնի ղեկավար Տ. Դանիել եպս. Ֆընտըգյանը:

Դանիել սրբազանը, անդրադառնալով օրվա խորհրդին, խոսեց անցած շաբաթների նշանակության մասին՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր կիրակի կարևոր հանգրվան է եկեղեցու և հավատացյալի կյանքում, իսկ Ծաղկազարդի խորհրդով դուռ է բացվում դեպի մեր Փրկչի Հարության տոնակատարություններ:

Վերջում պատարագիչ սրբազանը, աղոթք վերառաքելով առ Աստված, դիմեց հավատավոր ժողովրդին՝ հորդորելով Ծաղկազարդի խորհրդով լցված ընթանալ փրկության ճանապարհով:

Սուրբ պատարագի ավարտից հետո Մայր տաճարի զանգակատան առջև համախմբվել էր հայաստանյան տարբեր թեմերից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած շուրջ 600 արցախցի:

Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի հանդիսապետությամբ կատարվեց մանուկների օրհնության կարգ, որից հետո նրանց ընծայվեցին Աստվածաշունչ մատյաններ, աղոթագրքեր և խաչեր:

Արցախցի մանուկների և նրանց ընտանիքների համար Մայր Աթոռի միաբանական սեղանատանը կազմակերպվեց հյուրասիրություն, իսկ էջմիածնի հայորդյաց տանը՝ համերգային ծրագիր:

Ավագ հինգշաբթին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մարտի 28-ին՝ Ավագ հինգշաբթի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին հիշատակեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի վերջին ընթրիքը և Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատումը:

Այս առիթով առավոտյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Հովհաննես Մկրտիչ – Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում կատարվեց Ապաշխարողաց կարգ:

Այնուհետև Մայր Աթոռի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Սուրբ Գայանե վանքում մասնակցեց Միջօրեի ժամերգությանը և Սուրբ Պատարագի արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Անանիա վրդ. Ծատուրյանը, որը Սուրբ Պատարագի ընթացքում ընթերցեց նաև Սուրբ Բարսեղ Կեսարացու «Սուրբ Հաղորդության մասին» ճառը:

Մայր Աթոռում կատարվեց Ոտնլվայի կարգը

Մարտի 28-ին՝ Ավագ հինգշաբթի, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Մայր Աթոռի Սուրբ Տրդատի բաց խորանին կատարվեց Ոտնլվայի կարգը:

Սրբազան արարողության ընթացքում՝ սուրբգրային ընթերցումներից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խորանի վրա դրված ջուրն ու յուղը: Ապա շարականների երգեցողության ներքո, Աստվածորդու օրինակով, Նորին Սրբությունը ծնրադիր լվաց և յուղով օծեց Մայր Աթոռի միաբաններ





Տ. Վահան եպս. Հովհաննիսյանի, Տ. Գրիգոր աբդ. Մինասյանի, Հակոբ սրկ. Գևորգյանի, Արման սրկ. Գազազյանի, «Կորպորասիոն Ամերիկա օդանավակայաններ» ընկերության գործադիր տնօրեն Մարտին Էռնեկյանի, արգենտինահայ ձեռնարկատեր Խուան Պաբլո Մարկարյանի, ԵՊՀ-ի ուսանողներ Արթուր Նիգարյանի, Դավիթ Գրիգորյանի, ՀՀ ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայողներ Արթուր Միքայելյանի, Արամ Ալեքսանյանի, «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտներ Գագիկ Հովհաննիսյանի, Արեգ Միրզոյանի, Գևորգ Ներսիսյանի, ինչպես նաև մանուկներ Ռոբերտ Ասրյանի և Տիգրան Մարգարյանի ոտքերը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց ներկա բարեպաշտ ժողովրդին, որից հետո օրհնված յուղը բաժանվեց հավատացյալներին:

Սուրբ Հարության Ճրագալույցի պատարագը Սուրբ Գայանե վանքում

Մարտի 30-ին՝ Ավագ շաբաթ օրը՝ երեկոյան, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդությամբ Մայր Աթոռի միաբանությունը Ճրագալույցի Սուրբ պատարագին մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս. Տիգրանյանը:

Մինչ սուրբ պատարագը կատարվեց ճաշու երրորդ ժամերգությունը, ապա կարդացվեցին սուրբգրային ընթերցվածքներ, որից հետո Մայր Աթոռի միաբան չորս սարկավագ ընթերցեց Դանիել մարգարեի թուղթը:

Արտակ սրբազանը, իր քարոզում անդրադառնալով Հարության խորհրդին, ի մասնավորի նշեց. ««Չէ աստ, այլ յարեաւ» (Ղուկ. ԻԴ 6) խոսքերը, որոնցով Քրիստոսի գերեզման այցելած յուղաբեր կանանց դիմավորեց հրեշտակը, ամենքիս համար հնչում են որպես ավետիս: Սակայն Քրիստոսի թաղումից հետո աշակերտների՝ անորոշության մեջ դեգերող միտքն ի վիճակի չէր ընկալելու այս խոսքերում թաքնված ուրախությունը: Անորոշության ու հուսահատության խավարը ցրելու համար՝ հարությունից հետո Քրիստոս տարբեր վայրերում հայտնվում է Իր աշակերտներին և Իրեն հետևող բազմաթիվ այլ մարդկանց»:

Այնուհետև անդրադառնալով Փրկչի հետհարության երևումներին՝ մասնավորապես Ղուկասի Ավետարանում հիշատակվող Էմմավուսի ճամփորդների դրվագին, պատարագիչ սրբազանն ընդգծեց. ➥ էջ 3

Սուրբ Հարության Ճրագալույցի պատարագը Սուրբ Գայանե վանքում

➥ էջ 2

«Սուրբ Հարության ճրագալույցի այս երեկոյան տեսնում ենք, որ Քրիստոսի հետ անցել ենք երկար մի ճանապարհ, ավելի երկար, քան Երուսաղեմն Էմմավուսից բաժանող տասնմեկ կիլոմետրերը: Եկել ու հասել ենք մի հանգրվանի, որտեղ մեզանից յուրաքանչյուրը պետք է կատարի իր կյանքի կարևորագույն որոշումը՝ ընդունել հարուցյալ Տիրոջը մեր հոգիներում ու սրտերում»:

Վերջում Արտակ սրբազանը, հորդորեց հավատացյալ ժողովրդին հարուցյալ Աստվածորդու ձեռքն ամուր բռնած անսայթաք քայլել դեպի հավիտենական կյանք տանող ճանապարհով, որտեղ գրկաբաց մեզ է սպասում բազմագութ և սիրող Հայրը:

Հավարտ սուրբ պատարագի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ Սուրբ Խորան և Սուրբ Սեղանի կանթեղից վառեց Տեր Հիսուս Քրիստոսին խորհրդանշող կենսատու մոմը, որը բաշխվեց հավատացյալներին:

Պատարագի սրբազան արարողությունից հետո Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, ուր նախագահությամբ Հայոց Հովվապետի՝ կատարվեց Սուրբ Հարության տնօրհնեք:

Հայրապետական սուրբ պատարագ Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում

Մարտի 31-ին՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը սուրբ և անմահ պատարագ մատուցեց Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Հայրապետական սուրբ պատարագին ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, քաղաքական-հասարակական գործիչներ և ուխտավոր հայորդիներ:

Մայր եկեղեցու գավթում՝ ամպհովանու ներքո ամփոփված Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքների առջև, երկրպագություն կատարելուց հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունը բաշխելով ներկա հավատացյալ ժողովրդին, եկեղեցականաց թափորով առաջնորդվեց դեպի Սուրբ Խորան:

Վեհափառ Հայրապետին որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը և Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը:

Սուրբ պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը համայն հայությանը հղեց հայրապետական իր պատգամը՝ փոխանցելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» հրեշտակաբարբառ ավետիսը:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայտարարություն Արցախի գերեվարված ռազմաքաղաքական ղեկավարների հիմնարար իրավունքների ոտնահարման դեպքերի վերաբերյալ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Հայաստանի եպիսկոպոսները և թեմական առաջնորդները հանդես են եկել հայտարարությամբ Արցախի Հանրապետության գերեվարված ռազմաքաղաքական ղեկավարների հիմնարար իրավունքների ոտնահարման դեպքերի վերաբերյալ:

«Օրեր առաջ ադրբեջանական քարոզչամեքենան հանցավոր չարախնդությամբ եթեր հեռարձակեց Արցախի Հանրապետության գերեվարված ռազմաքաղաքական ղեկավարների հետ պարտադրված հարցազրույցների հիման վրա հորինված, առաջիկա մարտի 28-ին ցուցադրության նախատեսված, այսպես կոչված, «Անտիտեռոր» վերնագրված ֆիլմի անոնսը:

Արցախի առևանգված ու պատանդառված ղեկավարների նկատմամբ ցուցաբերվող նման քայլը հերթական անգամ բացահայտում է ադրբեջանական իշխանությունների որդեգրած քաղաքականության հակահայկական էությունը:

Ամոթալի նմանօրինակ գործողություններով ուղղակիորեն ոտնահարվում և անարգվում են միջազգայնորեն ճանաչված մարդկային հիմնարար իրավունքները: Հերթական անգամ փորձ է արվում գերեվարված անձանց խոցելիությունն օգտագործելու անբարո գործելաոճի միջոցով ապակողմնորոշել միջազգային հանրությանը և տասնամյակներ շարունակ ադրբեջանական բռնությունների ու գոյաբանական սպառնալիքների դեմ արցախահայության մղած ինքնորոշման արդարացի պայքարը ներկայացնել որպես ահաբեկչություն:

Գերեվարված հայորդիներին նվաստացնող բացահայտ այս գործողությունները կրկին ակներև են դարձնում խաղաղության հասնելու Ադրբեջանի ղեկավարության հավաստիացումների կեղծ ու նենգամիտ բնույթը:

Խաղաղությունը չի կարող կերտվել հայ ժողովրդի արժանապատվության ոտնահարման, ատելության ու թշնամանքի շարունակական սերմանման և արցախահայության արդար իրավունքների նկատմամբ անհարգալից դրսևորումների պայմաններում:

Հայաստանի իշխանությունները «խաղաղության դարաշրջան» կերտելու իրենց ձգտումներում առաջնայնորեն պետք է հասնեն Ադրբեջանի կողմից նմանօրինակ ագրեսիվ ու թշնամական գործողությունների բացառմանը և բոլոր հայ գերիների անպայմանավոր ազատ արձակմանը:

Կոչ ենք ուղղում միջազգային հանրությանը, մարդասիրական առաքելություն իրականացնող կազմակերպություններին՝ համարժեքորեն արձագանքել հայ գերիների նկատմամբ Ադրբեջանի դրսևորած հիշյալ զազրելի գործողություններին և առավել գործնական ու ազդու միջոցներ կիրառել հայ գերիների իրավունքների պաշտպանության և հայրենիք շուտափույթ վերադարձի ուղղությամբ:

Աղոթում ենք երկնավոր Տիրոջը, որ զորացնի բոլոր նեղյալներին ու գերյալներին՝ հաղթահարելու համար մարդկային չարիքի ու արհավիրքի պատճառած զրկանքներն ու տառապանքները:

Թող ամենազոր Աստված օրհնի մեր երկիրն ու ժողովրդին և խաղաղություն սփռի համայն աշխարհում ու մեր տարածաշրջանում»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց քառասնօրյա պատրաստության շրջանն անցած նորաօծ քահանաներին

Մարտի 17-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց փետրվարի 4-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում քահանայական ձեռնադրության ու օծման արժանացած և Մայր Աթոռում քառասնօրյա պատրաստության շրջանն անցած նորաօծ եկեղեցականներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս. Բաբայանի:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունը փոխանցելով քահանա հայրերին, հորդորեց վերջիններիս իրենց ծառայությունն իրականացնել ավետարանական պատվիրանների ու պատգամների համաձայն, առաջնորդվել մեր սուրբ հայրերի օրինակով:

Հայոց Հովվապետն ընդգծեց նաև, որ նորաօծ հայրերն իրենց ծառայության մեջ կհանդիպեն բազմաթիվ դժվարությունների և մարտահրավերների, սակայն առ Աստված զորավոր հավատքով, նվիրյալ ծառայությամբ, խոհեմությամբ ու համբերատարությամբ կկարողանան հաղթահարել դրանք՝ արդյունավետ դարձնելով հոգևոր սպասավորությունը Մայր Եկեղեցու անդաստանում: Վերջում Վեհափառ Հայրապետը պատգամեց հոգևոր հայրերին լինել անսասան ու հաստատուն իրենց կոչման մեջ, հույսով, հավատքով, սիրով և անձնդիր նվիրումով ծառայել հավատավոր հոտին: Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը Պահպանիչ աղոթքով օրհնեց հոգևորականներին և նրանց ընծայեց ձեռաց խաչեր ու Սուրբ Հաղորդության մասնատուփեր:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Տ. Մուշեղ եպս. Բաբայանը, ազատվելով Մայր տաճարի լուսարարապետի և Մայրավանքի տեսչի պարտականություններից, նշանակվել է Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն:

Տ. Ղուկաս աբդ. Հոխանյանը ծառայության է կոչվել Եգիպտոսի հայոց թեմում, իսկ Տ. Արտակ քհն. Միրզոյանը և Տ. Սեպուհ քհն. Բաղդասարյանը՝ Իրաքի հայոց թեմում:

Տ. Ղևոնդ աբդ. Սաղաթելյանը, ազատվելով Իրաքի հայոց թեմում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը, ազատվելով Մայր Աթոռի քարոզչական կենտրոնի տնօրենի և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի վարիչի պարտականություններից, նշանակվել է Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն:

Տ. Հովհաննես աբդ. Թորգոմյանը ծառայության է կոչվել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմում, իսկ Տ. Ղևոնդ քհն. Հայրապետյանը՝ ՀՀ զինված ուժերում:

Տ. Հարություն վրդ. Կիրակոսյանը նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետի պաշտոնակատար:

Կարգալույծ է հռչակվել

Մարտի 19-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ, իր դիմումի համաձայն, կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Վազգեն աբդ. Պետրոսյանը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Ռաֆայել Պետրոսյան ավազանի անունով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Մայր Աթոռում վերապատրաստման դասընթացներին մասնակից եկեղեցականների հետ

Մարտի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց երեքշաբաթյա վերապատրաստման դասընթացներին մասնակից քահանաներին, որոնք ժամանել էին Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, անդրադարձավ վերապատրաստման դասընթացների ընթացքին և դրանց արդյունավետությանը:

Այնուհետև Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունը բերելով հոգևոր հայրերին, կարևորեց վերապատրաստման այս դասընթացները, որոնք հնարավորություն են ընձեռում տարբեր թեմերից ժամանած հոգևորականներին հաղորդակից լինելու Սուրբ Էջմիածնի խորհրդին և առաքելությանը, ինչպես նաև իրենց ուխտը վերանորոգելու և միմյանց իրենց հոգևոր փորձառությունը փոխանցելու:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց քահանա հայրերին առավել ջանասիրությամբ շարունակել իրենց նվիրյալ ծառայությունն ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի բարօրություն հայ ժողովրդի:

Հանդիպմանը հոգևորականների անունից Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեց Կրասնոդարի և Հյուսիսային Կովկասի հայոց թեմի Պյատիգորսկի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Արամ ավ. Քհն. Հունանյանը: Տեր հայրն իր երախտագիտությունը հայտնեց հայոց Հովվապետին՝ դասընթացների կազմակերպման համար՝ վստահեցնելով, որ դրանք իրենց օգտակարությունն են բերում եկեղեցականների հովվական ծառայությանն առավել արդյունավորման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել ՌԴ նախագահին և Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքին

Մարտի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագրեր է հղել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին և Մոսկվայի և Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին՝ Մերձմոսկվայի Կրասնոգորսկ քաղաքի «Կրոկուս սիթի հոլ» համերգասրահում տեղի ունեցած ահաբեկչության կապակցությամբ:

Խստորեն դատապարտելով անմարդկային ոճրագործությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգևոր խորհրդի, հոգևոր դասի և հավատավոր հայ ժողովրդի անունից խորին վշտակցություն է հայտնել ՌԴ նախագահին, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հովվապետին և Ռուսաստանի ողջ ժողովրդին:

Վեհափառ Հայրապետը հայցել է, որ ամենողորմ Աստված երկնային օթևաններում հանգչեցնի զոհված քաղաքացիների հոգիները, Սուրբ Հոգով մխիթարի բոլոր սգավորներին և շուտափույթ ապաքինում պարգևի բոլոր տուժածներին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՆԱԽԷ... ԱՆՄԿԻԶԲ ՈՒ ԱՆՎԵՐՋ, ԱՆՔՆԻՆ ԵՎ ԱՆԸՄՏԳՅՈՒՏ....

Աստվածակերտ մարդը՝ Imago Dei

Աստվածաշնչի համաձայն՝ առաջին մարդը կատարյալ էր՝ ստեղծված Աստծո պատկերով (Ծննդ. Ա 26), Ղուկաս ավետարանիչն այս հատվածից ավելի խոր իմաստ է վերհանում՝ Ադամին Աստծո Որդի կոչելով (Ղուկ. Գ 38): Հետևաբար՝ Ադամից հետո մարդկային ամբողջ ցեղը՝ անհատապես վերցրած, կրում է Աստծո պատկերը: Սակայն տեսականորեն ի՞նչ է սա նշանակում: Շատ ուսումնասիրողներ կարծում են՝ աստվածնմանությունը չի կարող վերաբերել մարմնական, կենսաբանական ձևին, քանի որ Աստված Հոգի է, իսկ մարդը՝ երկրային, հողեղեն արարած: Այնուամենայնիվ, մարդու մարմինը, որն իրական և տեսանելի կերպարանք է, ներառված է պատկերի մեջ:

Ընդունելով մարմինը՝ չենք կարող չնշել նաև մարդկային խոսքը և ստեղծագործական ունակությունները, որոնք վեհացնում և մարդուն բարձրակարգ արարածի առանձնաշնորհմամբ են օժտում: Նշենք նաև, որ ամենակարող Աստված մարդու հետ կիսեց կենդանական թագավորության վրա տիրապետությունն ու իշխանությունը (Ծննդ. Ա 28). մի գործունեություն, որում ներգրավված է մարմինն իր ամբողջությամբ, ինչպես նաև՝ միտքը: Ավելին. Աստծո Որդին պատվեց մարդկային մարմինը՝ մարմնանալով և բնակվելով մարդկանց մեջ (Հովհ. Ա 14, Եբր. Բ 14):

Մենք կարող ենք մարդուն ներկայացնել որպես Աստծո և կենդանական աշխարհի բնակիչների ունեցած հակոտնյա առանձահատկությունների համաձույլ կրողի: Բնախոսական և կազմաբանական առումով մարդը նման է կենդանիներին: Նրանք անգամ ընդհանրություններ ունեն ժառանգականության ծածկագրում, և մարդու վարքն էլ մեծավ մասամբ վերահսկվում է պավլովյան պայմանական հակազդումներով: Բարեշրջության կողմնակիցները մարդ արարածին անվանում են մարդակերպներ: Ծննդոց գրքի պատմությունը վերհանում է մարդու և կենդանիների կարևոր նմանությունները և տարբերությունները: Մարդու մասին կարդում ենք. «Եվ Տերը՝ Աստված, մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կյանքի շունչ փչեց, և մարդը եղավ ապրող էակ» (Ծննդ. Բ 7), իսկ կենդանիների մասին՝ «Երկիրը թող շնչավոր էակներ հանի ըստ տեսակների՝ չորքոտանիներ, սողուններ և երկրի գազաններ՝ ըստ տեսակների» (Ծննդ. Ա 24): Կենդանիները նկարագրվում են որպես կենդանի շունչ ունեցող արարածներ (հմմտ. Ծննդ. Ա 20), իսկ մարդը՝ կենդանի, ապրող էակ (հմմտ. Ծննդ. Բ 7): Եբրայերեն Աստվածաշնչում և՛ մարդիկ, և՛ կենդանիները նկարագրվում են «նեֆեշ» (נֶפֶשׁ) բառով: Ջրհեղեղի հետևանքների մասին պատմող սուրբգրային հատվածում ավելի է ընդգծվում բառի երկուստեք ներառականությունը. «Իր ռունգերի մեջ *կենդանի շունչ* ունեցող ամեն մի էակ, ցամաքի վրա եղած ամեն մի բան ոչնչացավ: Աստված բնաջնջեց երկրի երեսին գտնվող ամեն մի *էակ՝* մարդուց մինչև կենդանի, սողուններից մինչև երկնքի թռչունները» (Ծննդ. Է 22–23): Հետագա գլուխներում բացատրվում է, որ «կյանքը» (նեֆեշ) արյան մեջ է (Ծննդ. Թ 4): Ուստի կյանքը՝ որպես շնչառական կենսագործունեություն, այն էական գործոնը չէ, որը տարբերում է մարդուն կենդանիներից: Պետք է ավելի խորը ներթափանցել՝ ի լույս բերելու մարդու «աստվածային» ծագումը:

Աստված մարդուն առաձնակի կերպով է վերաբերվում կենդանիների հետ փոխառնչության համապատկերում: Աստվածաշնչի պատմությունը հիմնականում Աստծո և մարդու փոխհարաբերությունների մասին է: Մարդուն ստեղծել է Աստված՝ Իր պատկերով, Իր փառքի համար, և գոյություն ունի միայն Աստծո հետ շփման հարթության վրա: Ճիշտ է՝ երկիրն ու կենդանիները նույնպես տեղ ունեն Աստծո տնտեսության մեջ, բայց, ըստ էության, աշխարհն ստեղծվել է որպես մարդու ապրելու վայր. «Որովհետև ստեղծագործությունն անհամբերությամբ սպասում է Աստծու որդիների հայտնությանը, քանի որ ստեղծագործությունը հնազանդվեց ունայնությանը, ոչ իր կամքով, այլ նրա կամքով, ով հնազանդեցրեց նրան, այն հույսով, որ ստեղծագործությունն ինքը նույնպես կազատվի ապականության ծառայությունից՝ Աստծու որդիների փառքի ազատության մեջ մտնելու համար» (Հռոմ. Ը 19–21):

Աստծո պատկերի հիմնական ազդեցությունն այն է, որ Աստված մարդուն տալիս է Իրեն հատուկ որոշ հատկանիշներ՝ դրանով իսկ առանձնացնելով և տարբերելով մարդ էակին գազաններից: Որո՞նք են այդ հատուկ աստվածանման հատկությունները, որոնք մարդուն շնորհվել են առատաձիր Տիրոջից: Նշենք մի քանիսը՝ լեզուն, ստեղծագործ ունակությունը, սերը, սրբությունը, անմահությունը և ազատությունը: Ցանկը, թերևս, կարող ենք ավելի ընդարձակել:

Ծննդոց 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխներում մենք արձանագրում ենք Սուրբ Գրքում հիշատակված առաջին մարդկանց՝ Ադամի, Եվայի և նրանց ավագ որդի Կայենի խոսքերը, որոնք մարդկության պատմության արշալույսին դիցաբանական հատուկ մտածողության հետքեր չեն: Հարց է ծագում՝ ինչպե՞ս են նրանք սովորել խոսել: Միակ հնարավոր պատասխանն այն է, որ դա ի բնե նրանց տրվել է Աստծո միջոցով՝ որպես աստվածային ժառանգության:

Հուդա-քրիստոնեական Աստծո՝ Աստվածաշնչի Տիրոջ մասին ապշեցուցիչ փաստն այն է, որ Նա հաղորդակցվող է: Թեև քրիստոնյան, ինչպես և հրեան, երկրպագում է միայն մեկ Աստծու. «Լսի՛ր, Իսրայե՛լ, Տերը և միայն Տերն է մեր Աստվածը» (Բ Օր. Զ 4, հմմտ. Մարկ. ԺԲ 29), և բազմաստվածություն չի ընդունում, միաժամանակ հավատում է, որ Աստված Սուրբ Երրորդություն է՝ երեք անձ մեկ էության մեջ, անշփոթ միասնություն՝ բազմազանության մեջ: Ծննդոց 1-ին գլխում գրված է, որ Աստված ասաց. «Եկեք մարդ ստեղծենք մեր պատկերով»՝ օգտագործելով հոգնակի թվով բայաձև: Հաղորդակցության կարևորության մասին է փաստում նաև այն, որ Աստված աշխարհ ուղարկեց Իր որդուն՝ Հիսուս Քրիստոսին, Որն անվանվում է Լոգոս կամ «Խոսք/Բան»: Հովհաննես ավետարանիչը գրում է. «Սկզբից էր Բանը և Բանն Աստծու մոտ էր և Բանն Աստված էր: ➥ էջ 5

Աստվածակերտ մարդը՝ Imago Dei

➥ էջ 4

Նա սկզբից Աստծու մոտ էր: Ամեն ինչ նրանով եղավ, և առանց նրա չեղավ ոչինչ, որ եղել է» (Հովհ. Ա 1–3): Այսպիսով՝ կան թե՛ գրավոր խոսքը (Աստվածաշունչը) և թե՛ կենդանի Խոսքը (Հիսուս Քրիստոս):

Աստված Արարիչ է՝ տիեզերքի մեծ ծրագրավորողը: Նա իր ծրագիրը հասցրեց հաղթական ավարտին, երբ տեսավ այն ամենը, ինչ արել էր և «լավ» բնորոշեց: Աստված մարդուն արու և էգ ստեղծեց, օրհնեց ու ասաց՝ «Աճեցե՛ք և բազմացե՛ք» (Ծննդ. Ա 28): Այսպիսով՝ Աստված տղամարդկանց և կանանց հնարավորություն է տվել ծնելու Իր պատկերով նոր էակների:

Մարդուն հատուկ է նաև այնպիսի խոր և կենսահաստատ զգացողությունը, որը կոչում ենք սեր: Այն Աստծո բնավորության էությունն է. «Աստված սեր է» (Ա Հովհ. Դ 16): Նրա սերը մարդու հանդեպ շատ ավելի գերազանցում է մարդկային ըմբռնմանը: Հենց սա է Սուրբ Գրքի հիմնական նյութը: Նույնիսկ երբ մարդը նորից ու նորից մեղանչում է՝ հեռանալով Աստծուց, չի դադարում ապավինել սիրագութ Տիրոջ ողորմությանը. «Անսպառ են Տիրոջ ողորմությունները, նրա գթությունները չեն նվազում: Ամեն նոր առավոտի հետ բազմանում է քո ճշմարտությունը, Տե՛ր» (Ողբ Եր. Ե 22–23): Մարդը սիրելու կարողություն ունի, որն ավելի գերազանց է, քան կենդանու բնազդային մայրությամբ կամ սեռական արձագանքով արտահայտված զգացումը:

Ադամն ստեղծվել է միայն Աստծուց մի փոքր ցածր (Սաղմ. Ը 5)՝ որպես ազատ հոգևոր էակ: Ունենալով մտածող միտք, ընտրություն կատարելու և գործելու կարողություն՝ մարդը կարող է սիրել և երկրպագել Աստծուն կամ էլ ապստամբել Աստծո դեմ: Մարդկային ցեղի համար ողբերգությունն այն է, որ Ադամն ու Եվան, օձի կողմից գայթակղված, հենց այդպես էլ վարվեցին: Մարդն այսպիսի «ոսկե մեկնարկով» սկսեց օգտագործել իր ազատությունը՝ ընդդիմանալով իր Արարչի պատվերին: Սատանայի սուտն էր, թե Աստծուց անկախ լինելը նշանակում է «ազատ» լինել, մինչդեռ ազատություն չկա. մենք բոլորս «ծառա» ենք՝ կամ Քրիստոսի, կամ սատանայի:

Անկումից ի վեր մարդու որոշումներն ու վարքը բխում են նրա ներքին բնավորությունից և ոչ թե արտաքին սահմանափակումներից: Բայց քանի որ նրա էությունն այժմ մեղավոր է, նրա որոշումներն ու արարքները նույնպես մեղավոր են: Երբ մենք սխալ ենք գործում, դա այն պատճառով է, որ մենք գայթակղվել ենք մեր չար ցանկությամբ. «Յուրաքանչյուր ոք փորձվում է՝ հրապուրվելով և խաբվելով իր ցանկություններից: Այնուհետև ցանկությունը հղանալով մեղք է ծնում, մեղքն էլ՝ հասունանալով՝ մահ» (Հակ. Ա 14–15): Նույնիսկ մեր արդար գործերը անմաքուր լաթի պես են (Ես. ԿԴ 6), քանի որ ապականված, հիվանդ ծառը չի կարող լավ պտուղ տալ (Մատթ. Է 18): Զարմանալի չէ, որ Պողոսը նման հաստատունությամբ է պատկերում մեղքի հետևանքով երկատված մարդու մտահոգևոր տվայտանքը. «Արդ, ես չէ, որ գործում եմ այն, այլ իմ մեջ բնակվող մեղքը: Գիտեմ, որ բարի բան չի բնակվում իմ մեջ, այսինքն՝ իմ մարմնի մեջ, որովհետև կամեցողություն կա իմ մեջ, բայց բարի գործադրելու կարողություն՝ ոչ: Ոչ թե բարին եմ անում, որ ուզում եմ, այլ չարը, որ չեմ ուզում, այն եմ անում... Ապա ուրեմն ես ինքս իմ մտքով ծառայում եմ Աստծու օրենքին, իսկ մարմնով՝ մեղքի օրենքին» (Հռոմ. Է 17–19, 24):

Վարդգես Սուրենյանց. «Եկայք առ իս...», 1900

Մարդը ցանկանում է ազատություն, որը հաճախ նա փնտրում է սխալ տեղում: Պետրոս առաքյալն ասում է, որ կոչված ենք ազատ լինելու, բայց «....ազատությունն իբրև չարիքի պատրվակ մի՛ բռնեք, այլ ապրե՛ք որպես Աստծու ծառաներ» (Ա Պետ. Բ 16):

Աստվածային պատկերի վերաբերյալ նորկտակարանյան բնագրերի համընդգրկուն խորհրդածությունը ցույց է տալիս, որ մարդն ստեղծված է Աստծո հետ ուխտի հաղորդակցության համար, արդարության և սրբության հարաջան ձգտումով, որով գունեղանում է մարդկային կյանքը, ամբողջանում աստվածնմանությամբ. «Ինչ է մարդու կյանքը.... աստվածության պատկեր»,– հաստատում է գերմանացի ականավոր պոետ Ֆրիդրիխ Հյոլդեռլինը (տե՛ս Friedrich Hölderlin, Gedichte, Stuttgart, 2000, էջ 407):

Թեև անկումը խաթարեց Աստծո պատկերը մարդու մեջ, սակայն Աստված ուղարկեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին՝ փրկագնելու մարդկությանը և վերականգնելու Աստծո պատկերը «ճշմարիտ արդարությամբ և սրբությամբ» (Եփես. Դ 24): Աստծո պատկերի վերաբերյալ քրիստոնեական եզակի տեսակետն այն է, որ Հիսուս Քրիստոսն Աստծո պատկերով մարդու ամենալիարժեք և ամբողջական օրինակն է: Եբրայեցիս 1-ին գլխում Նա անվանվում է Հոր «էության պատկեր», իսկ կողոսացիներին ուղղված Թղթում Հիսուս ներկայացվում է որպես «անտեսանելի Աստծո պատկեր»: Imago Dei-ն կյանքում վերանորոգելու ցանկությունը կարող է դիտվել որպես ամբողջականության կամ սեփական «էական» ես-ի որոնում, ինչպես նկարագրված և օրինակելի է Քրիստոսի կյանքում և ուսմունքում: Քրիստոնեական վարդապետության համաձայն՝ Հիսուսը գործել է Արարչի հետ հարաբերությունները վերականգնելու համար և ազատորեն առաջարկում է արդյունքում «ձեռքբերված» հաշտությունը՝ որպես նվեր:

Սուրբգրային մեկնաբաններն Աստծու պատկերը մեր մեջ ունենալու վերաբերյալ բերում են տիպական մի օրինակ. որդին ավելի լավ է արտացոլում հորը հասունանալուն պես, թեև կարող են լինել ֆիզիկական համեմատություններ, սակայն նմանություն կա նաև բնավորության գծերի մեջ: Աստվածաշնչյան բնագրից արտածելով այս բացատրությունը՝ կարող ենք պնդել, որ չնայած մենք՝ բոլորս, Աստծո պատկերն ենք կրում, նույնպես կարող ենք ավելի ու ավելի զարգացնել, կատարելագործել այն, քանի որ Աստծո պատկերակիր լինելը մեզ հնարավորություն է տալիս օգտագործել աստվածային հատկանիշներն արտացոլելու ներուժը: Սա համընկնում է Նոր Կտակարանի մի քանի բնագրի, որոնք վերաբերում են «գիտելիքի մեջ նորոգվելուն» և «պատկերին համապատասխանելուն»: Գաղափարն այն է, որ հոգևոր աճի և խորքային ըմբռնման միջոցով կարելի է հոգեպես հասունանալ և ավելի նմանվել Աստծուն և ավելի լավ ներկայացնել Նրան ուրիշներին:

Եկեղեցական հայրերը բացահայտել են մտքի և հոգու տարբեր կողմեր, որոնք մատնանշում են աստվածային նմանություն: Մարդիկ տարբերվում են մյուս բոլոր արարածներից մարդկային մտածողության գործընթացների ինքնաարտացոլող, բանական բնույթով, իրենց վերացական, խորհրդանշական, ինչպես նաև որոշակի քննարկման և վճիռներ կայացնելու կարողությամբ: Այս կարողությունը մարդուն հնարավորություն է տալիս ինքնահիրացման և սուրբ իրականության մեջ մասնակցելու (տե՛ս Գործ. ԺԵ 28): Օգոստինոս Երանելին կարծում էր, որ Աստծո կերպարը բնակվում է մարդու հիշողության, ըմբռնման և կամքի մեջ՝ այս կերպ փնտրելով Աստծո երրորդութենական անձնավորությունը: Ոմանք խոսում են մարդու ինքնագիտակցության և անհատականության մասին, որոնք ավելի բարձր կարգի են, քան ունեն կենդանիները: Մարդն օժտված է խղճի զգացումով և բարոյական որոշումներ կայացնելու նախաձեռնողականությամբ: Ավելին. արարածների մեջ միայն մարդն է Աստծուն երկրպագում հոգևոր գիտակցությամբ, ինչպես Սողոմոնն է նկատել. Աստված «հավիտենականությունը դրել է մարդու սրտում» (Ժող. Գ 11):

Երկրի վերաբերյալ Աստծո նպատակները ներառում են հոգատարությունը՝ բնությունը պահպանելով, ընկերային արդարությունը և Նրա օրենքի արդար սկզբունքները պաշտպանելով: Մարդը պետք է իբրև օրինակ ընդունի Աստծո բարությունն ու առատաձեռնությունը: Կրելով Աստծո պատկերը և կառավարելով Աստծո անունից՝ մարդկությունը պետք է բարիք գործի երկրի վրա:

Սակայն մարդկության խնդիրն այն է, որ Աստծո կերպարը կորել է մեղքի պատճառով: Այն բանից հետո, երբ Ադամն ու Եվան խախտեցին Աստծո ուխտը, Տերը դուրս հանեց նրանց Եդեմի պարտեզից և Կենաց ծառ տանող ճանապարհը հսկողության հանձնեց քերովբեներին (հմմտ. Ծննդ. Գ 24): Մարդը դարձավ երկրի ծառան. Տեր Աստված նրան արտաքսեց Եդեմի պարտեզից՝ պատվիրելով մշակել հողը. «Եվ Տերը՝ Աստված, նրան դուրս հանեց բարօրության դրախտից՝ մշակելու հողը, որից առաջացել էր» (Ծննդ. Գ 23): Մեղքի հետևանքով, այո՛, աստվածային պատկերն ամբողջապես չի կորսվել, սակայն այն հիմնովին ապականվել է:

Մարդու՝ Աստծո պատկերն ունենալու սուրբգրային գաղափարը տեղ է գտել քրիստոնեական ծեսում: Սուրբ Բարսեղ Մեծի, Սուրբ Հակոբոսի Պատարագների մեջ նշվում է, որ Աստված երկրից մարդկանց ստեղծեց Իր պատկերով ու նմանությամբ և շնորհեց նրանց դրախտի վայելքը. և երբ նրանք խախտեցին պատվիրանը և արտաքսվեցին, Տերը չանարգեց և չլքեց նրանց, որովհետև Նա բարի է, խրատում է նրանց որպես բարի հայր, կանչում նրանց օրենքի միջոցով, ուսուցանում նրանց մարգարեների կյանքի օրինակներով և առակատիպ, երբեմն սոսկումնաշունչ քարոզների միջոցով: Սուրբ Գրիգոր Աստվածաբանի Պատարագի Անաֆորայում ևս գործածվում է հետաքրքիր արտահայտություն. «Դու ինձ վրա գրեցիր քո իշխանության պատկերը» (բնագրերը տե՛ս *Jasper and G.J. Cuming*, Prayers of the Eucharist: Early and Reformed, ed. Paul F. Bradshaw and Maxwell E. Johnson (Collegeville, MN: Liturgical Press Academic, 2019), 144, *Zakhary Beniamin* (2023). "Imago Dei in Early Christian Anaphoras". Studia Liturgica. 53 (1): 24–36):

Վաղ Եկեղեցու հայրերից Իրենեոս Լիոնացին եզակի է իր ժամանակի համար նրանով, որ նա մեծ ուշադրություն է դարձնում մարդու մարմնականությանը և Աստծո կերպարին: Իր «Ընդդեմ հերետիկոսների» գրքում նա գրում է, որ մարդը, ոչ թե մարդու մի մասը, ստեղծվեց Աստծո նմանությամբ: Իրենեոսի համար մեր գոյական մարմինն ակնհայտ նմանություն ունի Աստծո պատկերի հետ: Ավելին. քանի որ Որդին կերտված է Հոր նմանությամբ, մարդիկ նույնպես ձևավորվել են Որդու օրինակով և հետևաբար մարմնական նմանություն ունեն Որդու հետ: Սա ենթադրում է, որ մարդկանց նմանությունն Աստծուն բացահայտվում է մարմնավորված արարքների միջոցով: Մեղքի լինելության պատճառով մարդիկ ներկայումս գոյություն չունեն միայն Աստծո մաքուր պատկերով: Իրենեոսը պնդում է, որ պետք է «աճել» Աստծո նմանության մեջ: Դա արվում է գիտակցաբար և պատրաստակամորեն՝ սեփական մարմնի միջոցով: Մեղքի պատճառով մարդիկ կարիքն ունեն Աստծո Միածին Որդու, Որն Աստծո կատարյալ պատկերով է: Քանի որ մենք մարմնական էակներ ենք, Աստծո պատկերի լրիվության մեր ըմբռնումը չհաստատվեց, մինչև Որդին մարմնական ձև չստացավ: Ավելին. Որդու մարմնականության շնորհիվ է, որ Նա կարող է պատշաճ կերպով ուսուցանել մեզ, թե ինչպես ապրել և աճել Աստծո ամբողջական պատկերով: Հիսուսը, դառնալով մարմնական մարդ, մահանալով մարդկային մահով, իսկ հետո մարմնապես հարություն առնելով, «վերանայեց» կամ ամբողջությամբ բացահայտեց, թե ինչ է նշանակում լինել Աստծո պատկերով, և հետևաբար կրում է Աստծո պատկերով մեր էության ամբողջական վերականգնումը: Դրանով Հիսուսը դառնում է նոր Ադամ և Սուրբ Հոգու միջոցով փրկագնում մարդկային ցեղն իր լրիվության մեջ:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Սուրբ Հարություն

Այսօր հրեշտակք ի բարձունս ուրախանան ընդ մարդկան, որք իջեալ յերկնից տան զաւետիս աշխարհի. ցնծացէք, այսօր Քրիստոս յարեաւ ի մեռելոց
(Շարակնոց):

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը քրիստոնեական տոների շարքում առանցքային նշանակություն ունի: Հարության տոնին նախորդում է Մեծ պահքը, որը մի յուրօրինակ ճանապարհորդություն է. այս ընթացքում փակվում են բոլոր եկեղեցիների վարագույրները՝ հրավիրելով մեզ ապաշխարության: Տիրոջ հարության օրը բացվում են վարագույրները, և ցնծությամբ տոնում ենք Նրա հրաշափառ հարությունը:

Սուրբ Հարության տոնը հայտնի է նաև Սուրբ Զատիկ անվամբ: Զատիկը հին հրեաների՝ եգիպտական գերությունից ազատագրվելու տոնն է: Ինչպես հրեաները, 430 տարի գերության մեջ գտնվելով եգիպտացիների երկրում, Մովսես մարգարեի առաջնորդությամբ ազատագրվեցին ստրկությունից, այնպես էլ Քրիստոսի հարությամբ ողջ մարդկությունն ազատագրվեց մեղքի և մահվան ստրկությունից:

Փրկչի հարությունը ողջ մարդկության համար շրջադարձային նշանակություն ունեցավ: Հիսուս Քրիստոս, խաչի վրա Իր արյունը հեղելով, բոլորիս առաջ բացեց Երկնքի արքայության դռները, որ փակվել էին մեր նախածնողների պատվիրազանցության հետևանքով. Իր հարությամբ Քրիստոս ջախջախեց դժոխքի կապանքները, ինչպես Սուրբ Գ. Նարեկացին է գրում իր աղոթամատյանում. «Մեռար անմահդ և նորոգեցիր մահացածներին» (Գ. *Նարեկացի, Մատյան ողբերգության, Ս. Էջմիածին, 2021, էջ 365*):

Նախքան հարություն առնելը՝ մեր Տերն անցավ չարչարանքներով և տառապանքով լի մի ճանապարհ, որի ավարտը Փրկչի հաղթանակն էր մահվան նկատմամբ: Եվ երբ հարություն առավ, «Կայիափան ամոթահար եղավ, Աննան ապշեց, Հուդան խեղդվեց, արծաթն արհամարհվեց, դպիրները պապանձվեցին, ծերերը լռեցին, քահանաները համրացան» (Հ. *Սրճեցի, Ճառ Սուրբ Հարության, Ս. Էջմիածին, 1998, էջ 65):* Իսկ Նրան հավատացողները ցնծում և ուրախանում էին. «Հնչում է առաքյալների և հրեշտակների բարձրաբարբառ խոսքը, որպեսզի մեկմեկու ավետարանեն մեծ ուրախություն» (*նույն տեղում, էջ 66*): Առաքյալները, տեսնելով հարություն առած Հիսուս Քրիստոսին, նոր ըմբռնեցին իրենց Ուսուցչի մարդեղացման խորհուրդը: Նրանք Տիրոջ հարության վկաները դարձան՝ աներկյուղ քարոզելով այն աշխարհով մեկ: Առաքյալները Փրկչի հարության ճշմարտացիությունը ոչ միայն իրենց խոսքերով հաստատեցին, այլև իրենց կյանքով ու սոսկալի մահվամբ: Ովքեր հավատում են Տիրոջ հարությանը, «անոնց համար մահ չկայ. քառաթև խաչէն ճառագայթող սիրոյ արևին տակ մահը տեղի կուտայ կեանքին, ինչպես խաւարը՝ լոյսին» (*Ն. վրդ. Դանիէլեանց, Կեանքն առանց հաւատքի. ժողովրդական քարոզներ, հ. Ա., Ս. Էջմիածին, 2018, էջ 104*):

➥ էջ 7

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Կոստան Զարյանի «Երեք երգեր....»-ի խորհուրդը

Կոստան Զարյանը հայ գրականության մեջ ինքնատիպ հետագիծ թողած գրողներից է, մեր գրականության «իմաստասեր գեղապաշտը»: Անցել է ստեղծագործական բարդ ճանապարհ, գրել օտար լեզուներով և միայն բելգիացի մեծ մտածող է. Վերհառնի խորհրդով վերադարձել մայրենի ավազան: է. Վերհառնի հետ ծանոթությունն ու մտերմությունը ուղղորդող դեր ունեցան ապագա գրողի կյանքում: Զարյանը հետագայում պատմում է, որ երբ խոսում են գրողին հուզող առաջադիր խնդիրներից, ճշմարիտ գրականությունից, Վերհառնը հարցնում է. «Եթե հավատացյալ լինեիք, ո՞ր լեզվով պիտի աղոթեիք»: Զարյանը պատասխանում է.

— Մանուկ հասակիս մայրս ինձ սովորեցրել է «Հայր մեր...»՝ գրաբար:

— Հայերե՞ն:

— Հին հայերեն, այո՛:

— Ուրեմն ի՞նչ է բանաստեղծությունը, եթե ոչ *մշտատև աղոթք*»,— ասում է Վերհառնը:

1911-ին Զարյանն արդեն Վենետիկում էր, նպատակը՝ Մխիթարյան այրերի մոտ կատարելագործելու, զորացնելու հայերենը (մանկությունից նա ժառանգել էր Շամախիի գավառաբարբառը): «Լեզվին կենդանություն տալու համար պետք է վերադառնալ հողին»,— գրում է Զարյանը: Եվ թերևս դա էր պատճառը, որ գրողն անցնում է Պոլիս, որտեղ գրական նոր շարժման համար «հրաշալի հող» կար (գրականությունը դեպի նոր բարձունքներ տանող ընթացքի մեջ էին դրել Դ. Վարուժանը, Սիամանթոն, Ռ. Սևակը և ուրիշներ): Կ. Զարյանի, Դ. Վարուժանի, Հ. Օշականի, Ահարոնի ջանքերով կյանքի է կոչվում «Մեհյան» հանդեսի հրատարակումը:

1914-ի հոկտեմբերին Կ. Զարյանը, քաղաքական իրադարձություններով պայմանավորված, ընդհատում է «Մեհյանի» հրատարակությունը և Պոլսից անցնում Բուլղարիա, ապա՝ Իտալիա, նախ՝ Նեապոլ, փոքր հետո հաստատվում է Հռոմում: Գրողը որոշել էր հանրային և գրական գործունեություն ծավալել Իտալիայում և բարձրացնել իր ձայնը՝ ի շահ իրենց ազատության համար պայքարող ժողովուրդների՝ իհարկե առաջին հերթին հայերի: Այդ օրերի տպավորությամբ գրում և ամբողջացնում է «Երեք երգեր ասելու համար վիշտը երկրի և վիշտը երկնքի» գիրքը, որի առաջին մասը նույն թվականին Միլանի «L'Eroica» հանդեսի 8—10 միացյալ համարում հրատարակվում է իտալերեն՝ Ջովաննի Ալեսանդրո Ռոսսոյի թարգմանությամբ (նախապես գիրքը գրվել էր ֆրանսերեն): Այս հրատարակությունը հաջողություն է բերում հեղինակին, ջերմ ընդունելության արժանանում ընթերցողների կողմից: Բազմաթիվ հանդեսներ արձագանքում են ոգեշունչ հոդվածներով, հիացական արձագանքներ են հնչում Ռաբինդրանաթ Թագորի, Միգել դը Ունամունոյի կողմից: Վերջինս Կ. Զարյանին հասցեագրած նամակն ավարտում է այս նախադասությամբ. «Ձեր «Երգերում» ես տեսա հուսալքության անկումը, որից հառնում է հույսը: Դուք զգացել եք, որ գերագույն խաղաղության կարելի է հասնել տառապանքի միջոցով, և որ տառապանքն է հավերժական փառքի պայմանը. ցավը մաքրագործվելով է դառնում փառք: Ես աղոթում եմ Հայաստանի և Իտալիայի ողջության համար և իմ ամենախորին համակրանքն եմ հայտնում Ձեզ»: Այդ օրերին, բարձր գնահատելով Զարյանի պոեմի արվեստը, իտալացի բանաստեղծուհի Ադա Նեգրին գրում է. «....Մասեր կան, որոնք հասնում են *աստվածային գեղեցկության*, և պետք է երախտապարտ լինել հեղինակին՝ մարդկությանը տված իր նվերի համար»: Թերևս նմանօրինակ գնահատականների պատճառով Իտալիայի ամենանշանավոր հրատարակություններից «G. Carabba»-ն «Երեք երգեր....»-ը լույս է ընծայում առանձին գրքով՝ «Իտալիայի և աշխարհի գրողներ» մատենաշարով: Պոեմը պարբերաբար վերահրատարակվել և թարգմանվել է տարբեր լեզուներով: Պոեմի համար օրատորիա է գրել իտալացի երգահան, երաժշտագետ Օտտորինո Ռեսպիգին (այս մասին գրողն ակնածանքով է խոսում):

Ճանաչումը, իտալական միջավայրը, տարբեր ազգությունների հանրաճանաչ արվեստագետ և արվեստասեր ընկերների ներկայությունն ու աջակցությունը Կ. Զարյանին մղում են նոր գործունեության: Նա եվրոպական երկրների տարբեր ամբիոններից բարձրաձայնում է հայկական ջարդերի մասին և Հայաստանի ճակատագրի վերաբերյալ իր մտահոգություններն արտահայտում: Հռոմում եղած ժամանակ ունկնդրություն է խնդրում Հռոմի Բենեդիկտոս XII պապից, պատմում հայոց ջարդերից, հայցում պապի և քրիստոնեական Եկեղեցու միջամտությունը: Այս հանդիպումից հետո պապն իր հայտնի կոնդակում խոսում է ջարդերի զոհ դարձած ժողովուրդների մասին՝ հիշատակելով նաև բնաջնջվող հայերին:

Պոեմի հայերեն տարբերակը հրատարակվում է ավելի ուշ՝ 1931 թվականին, հեղինակը վկայում է. «Մատեանս այս՝ խորհրդոյ Կոստանայ Զարեան դրոշմեցաւ ի տպարանի Մխիթարեան Հարց ի Վիեննա, ի թուին ՌՅԶ»:

Կ. Զարյանը պոեմն անվանել է «Խորհուրդներ»՝ խորհուրդ չորս մասով՝ «ըստ եղանակների թավալման»: Առաջին մասը բացվում է «Աստուած մանուկ է, որովհետև նրանք, որ սիրում են, պարզ են ինչպէս երեխաները եւ դիւրահաւատ՝ ինչպէս երեխաները» բնաբանով, և քանի որ գրվել էր Մեծ աշխարհամարտից առաջ, բնականաբար պայծառ տրամադրությունների արձագանք է, «մանկաժպիտ գարուն» է, կյանքը հորդում է իր բնական ընթացքով, աշխարհը զարթոնքի և վեհության մեջ է, աշխարհ, որ արարվել է Աստծո սիրուց, քանզի Աստված սեր է, իսկ սերը թևեր է պարգևում, և «Աստված թևավոր» է: Ամենուր երգի, ծնծղաների, սրնգի ձայներն են, երգում են հովերը, ջրերը, ծաղիկները, բոլորը: Հեռվում, հովի երգին ձուլվելով, տարածվում է մեներգողի ձայնը. «....Եւ դալար մարգագետնի վրայ Նա սփռում է Իր մեծ աչքերը եւ լուսարձակ Իր ձեռքերով ամեն բան շոյում է շատ սիրով, որպէս զի ծնունդները ծաղկին մեծ ուրախութեան մէջ, բացուի ոսկէ արգանդը հողերի եւ *պատարագը լինի անվերջ*: Ալէլուիա, ալէլուիա»:

Խորհրդապաշտ բանաստեղծը փորձում է կյանքի հասցրած հարվածներին հակադրել հոգու ազատագրումը. հավերժության տանող ուղիներում կանգնած, կյանքն ու մահը հաշտեցնելով՝ մարդկային սրտերը լցնել անմեկնելի սիրով և աստվածային արբեցումով: Գեղեցիկ պատկեր է ծերունու և պատանու երկխոսությունը: Գարնանաբույր ծաղիկների՝ զամբուռի, մարեմխոտի, տոսախի արբեցնող բուրմունքը լցվել էր օդում: Բնության գեղեցկությամբ արբած՝ ծերունին խնդրում է տղային առաջնորդել իրեն. «Մեռնելուց առաջ ուզում եմ գարնան անարատ գինուց մի թաս էլ խմել: Այս օրը դեռ կայ՝ ո՞վ գիտէ վաղը...»: Իմաստախոս ծերունին շարունակում է կյանքի անցողիկության խորհուրդը մեկնել. «Մարդը ի՜նչ է որ. ծլում է հողի տուած պարգևի բոցի հետ միասին եւ նրա հետն էլ թառամում, գնում...»: Կյանքը գարուն է, սերը ծնվում է գարնանը, պոեմի հաջորդ էջերում հյուսվում է երիտասարդի և Սիրվարդի սիրո հեքիաթը: Երկրորդ երգը՝ որպես տարվա երկրորդ եղանակ, բացվում է ամռան պատկերներով: Եվ եթե առաջին երգում կյանքն ու մահը կողք կողքի են բերվում, ապա երկրորդում իրար կողքի են դրվում սերը և մահը.

Սէր եւ Մահ—
Օղակ օղակի հետ՝ շղթայ
Բիւր տեսիլքների, մարմնացումների
Ծաղի՛կ ցաւի
Ու տառապող անմահութիւն:

Տառապանքի հետ հաշտության եզրեր գտած մարդը հյուսում է իր երգը: Թվում է, թե բանաստեղծը կյանքի գրված օրենքների հետ հաշտ ապրելու եզրերն է ագուցում. «Արիւնի վառ կաթիլներից՝ // Կեանք է ծնում, // Իսկ կեանքերի հրդեհումից՝ // Մա՛հ է ծնում— // *ԱՅՍ Է ՕՐԷՆՔԸ*»:

Գրքի երրորդ մասը բացվում է «Աստուած վիրաւոր է. Իր վերքը սուտակ է՝ որ վառում է աշնանային նռերը» բնաբանով, որին հետևում է աշնան թախծապարար պատկերների խաղարկումը: Նախկին զվարթ նոտաներին հաջորդում են տխուր տեսարաններ. ջարդ, սարսափ, դեպի անապատ ձգվող երթ, աշնանային տերևաթափ, երկինք նայող ու գութ աղերսող աչքեր.

Աստուա՛ծ, Մ՛չք թափանցող, Ձե՛ռք ստեղծագործ.
Սի՛րտ բաբախուն, խօսի՛ր, խօսի՛ր—
քանզի ահաւասիկ՝ խեղճ եւ անուժ եմ ես, տերևի նման դողդողուն, վեհերոտ ու շուարած:

Եվ ցավից, ավերից տանջահար բանաստեղծը անապատներում թափառող ազգի ողբն է հյուսում, երբեմն նաև երկնքին հայացք ձգում և Աստծուն աղերսում իր հարցերի պատասխանները տալ. «Աստուած Տիեզերքի, կամքդ ինչո՞ւ է», կամ՝ «Ո՞ւր է նպատակը, ի՞նչ է նպատակը»:

Մեծախոհ լռությանը հաջորդում է չորրորդ մասը՝ որպես տարվա վերջին եղանակ: Այն բացվում է հետևյալ բնաբանով՝ «Աստուած ձիւն է մաքրամաքուր եւ սառ բիւրեղ ու ամայի մենութիւն է Աստուած, ինչպէս գագաթը բարձրաբերձ լերան», որին հետևում է մահագույժ ձմռան տրտմությունը, քամիները ողբում են, հեծում, մղկտում. վստահորեն մեկը մեռավ, անապատի հեռուներից լսվում է մի ձայն, քամին է վայում՝ սուլելով անթաղ ոսկորների միջով: Ծանրացած քայլում է մեներգողը, երկար ճանապարհից, սոսկալի տեսարաններից այլայլված, հուսահատումի, սպասումի տանջանքներից հետո նա երկխոսում է Բարձրյալի հետ, այլևս անզոր է, առաջանալ անկարող է.

— Մա՛րդ, չե՞ս տեսնում, որ լոյս, երկինք, ճանապարհ քո մէջն են: Հաւատա՛ եւ կառաջանաս՝:

— Կոյր եմ, Տէր:

— Հաւատա՛ եւ կը տեսնես: Իմացի՛ր, իմացի՛ր, դո՛ւ ես Տիեզերք:

Աստծո ձայնին ունկնդիր շարունակում է անապատում քայլել մեներգողը:

Հաջորդող տողերում երևում են թաղման թափորի ստվերները, ապա ցավը ատամների արանքում սեղմած հոր կերպարը, մայրերի ողբը. գերեզմանվում էր մի ողջ ժողովուրդ: Դարձյալ լսվում է մեներգողի հարցը՝ «Ո՞ւր ես, Տէր»:

«Ձայներ եկեղեցում»՝ ենթախորագրյալ «Հոգերգություն», մասը հայկական լքյալ մի եկեղեցու նկարագրությամբ է բացվում, ուր վերջին հեռացողների մոմերը ճարճատելով հանգչում են, օդում ծանրախոհ լռություն է, և «....Արևելքի լռութեան մէջ նոր կեանք առնող ցաւն է հիւսւում»: Հրեշտակներն աղոթում են, քերովբեները՝ երգում տաղեր՝ «պոկած Աստծո շրթունքներից», օգնություն աղերսող ձայները մարելով հանգչում են, մեռած երեխայի հոգին Աստծուն է ձայնում՝ «Ի՜մ Աստուած, ի՜մ Աստուած»....

Հեռվից լսվում է Աստվածամոր ձայնը՝ որպես մարդկության մեղքի պատճառով խաչված Որդու ցավի արձագանք.

Ես եմ Մայրը...
Ընդմի՛շտ, ընդմիշտ մեկնեցաւ
զաւակ իմ որ խաչուեցաւ:
Ես եմ Մայրը... Աչքերս յառած
դէպի ճամբան երկայնատարած
ուրկից անցաւ իմ Աստուած:
Սիրտ եմ ես, լալիւն եւ ցաւ,
ողբը նրա որ մեռաւ:
Ես եմ Մայրը— Մարիամը—
վշտի ժամը
որ զարնում է հեռուներէն
ձեռքը հրազէն
զաւկիս, զաւկիս, որ մեռաւ,
որ խաչուեցաւ:
Ես եմ Մայրը:

Միքելանջելո, Պիետա

«Քրիստոսի ողբը» երիտասարդ Միքելանջելոյի առաջին քանդակն է, որը գտնվում է Վատիկանի Սուրբ Պետրոս տաճարում: Միքելանջելոն այն կերտեց շուրջ երկու տարի: Իտալացի քանդակագործը վերահմաստավորել է բարձրագույն մարդասիրության հոգին՝ ավանդական հյուսիսային գոթական քանդակներում պատկերված մեռած Քրիստոսին՝ մոր գրկում: Տիրամայրը քանդակված է երիտասարդ և գեղեցիկ՝ Որդու կորուստը սգալիս:

Տաղերգուները հյուսում են աղոթքներ և տաղեր՝ խնդրելով Աստվածամորը արարչավանդ լույսը սփռել հավատավորների հոգու մեջ: Խորհրդապաշտ բանաստեղծը հանգչող մոմերի և մեռնող մարդկային կյանքերի զուգահեռն է ուրվագծում և աստղերի քերթվածին ունկնդիր՝ կյանքի ու մահվան հաշտեցման ծեսն է անում՝ կողք կողքի բերելով կյանքը—մահը—հարությունը. «Անցաւոր է վիշտը: Անհունի պատկերը միշտ նոյնը չէ: Փշրի՛ր կամքիդ մուրճերով շղթաները, որ կաշկանդում են քեզ: Անցաւոր է վիշտը: Տիեզերական ողբերգութեան տաղերը բիւրազան են եւ հմայիչ: Անցաւոր է վիշտը: Երգ եղիր, բո՛ց եղիր»:

Պոեմը, կարելի է ասել, իրականության և վերերկրայինի բախման հուսահատ ճիչ է, որից սակայն բանաստեղծը բխեցնում է հարության, ոգու վերածնման հավատի խորհուրդները (պատահական չէ, որ հեղինակը պոեմն անվանել է «Խորհուրդներ»):

Կ. Զարյանը մարդու իմացական և հուզական աշխարհը պեղելու և պատկերավորելու մեծ վարպետ է, նրա տողերի մեջ նկատելին բառերի նկարչականությունն ու երաժշտականությունն են (պատահական չէ նաև երգահան Ռեսպիգիի կողմից պոեմի երաժշտության՝ օրատորիայի ստեղծումը):

Նոնա ԴԱՎԹՅԱՆ
Բ. գ. թ., դոցենտ

Հայոց դարձն ըստ Ագաթանգեղոսի

Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» աշխատությունը հայ ժողովրդի կյանքի ճակատագրական, բախտորոշ փուլերից մեկի արտակարգ հետաքրքրական գիրքն է: Քանի որ Ագաթանգեղոսին իր նկարագրած դեպքերից մեկ դարից ավելի ժամանակ է բաժանում, ուստի այն հեռու է ժամանակագրություն լինելուց և իր բնույթով պատմակենսագրական վեպ է: Այո՛, վեպ, որը հավաստի դեպքերով ու իրական հերոսներով հանդերձ՝ ոչ թե սոսկ դեպքերի հերթական շարադրանք է, այլև գեղարվեստական բարձր արվեստով հյուսված վիպական ստեղծագործություն: Բնական է, որ հերոսները պետք է լինեին պատմական նշանավոր անձնավորություններ, քանզի սովորական մարդը դեռևս մուտք չուներ մատենագրության մեջ: Նկարագրելով հայոց Տրդատ թագավորին և Գրիգոր Լուսավորիչ վեհափառին՝ Ագաթանգեղոսն ստեղծել է կերպարներ: Իրական հերոսները, շնորհիվ պատմիչի ձիրքի, դարձել են նաև գեղարվեստական կերպարներ:



Էջմիածին, Մայր տաճար, 301—303 թթ.

Շարադրանքի հետաքրքրական մասերից է Տրդատի կերպարանափոխությունը. արքան դառնում է վայրի խոզ, արածում Արաքսի շամբուտներում, հետո իր կենդանական վիճակի մեջ պահում մարդկային հատկանիշեր՝ տեսնում է, լսում, խոսում և, մի քուրձով մարմինը ծածկած, շրջում ժողովրդի մեջ, մինչև նախ՝ ձեռքն ու ոտքը, և ապա՝ ամբողջ մարմինը, ազատվում են կենդանակերպ պատուհասից: Սա նշանակում է, որ Ագաթանգեղոսը տեղյակ է եղել կերպարանափոխություններին մասին եղած գրականությանը, որն առկա է հին հնդկական սուրբ գրքերում և հունական գրականության մեջ: Խոսքը մի կողմից վերաբերում է վեդաներին և Կրիշնայի ուսմունքին, իսկ մյուս կողմից՝ Օվիդիուս Նազոնի «Մետամորֆոզներին», որ հենց կերպարանափոխություն էլ նշանակում է: Այլակերպություն-փոխակերպություններով հարուստ է նաև Աստվածաշունչը, որը, բնականորեն, Ագաթանգեղոսը լավ պետք է իմանար և գիտեր:

Տրդատի կերպարը, ըստ շարադրանքի զարգացման, անընդհատ փոխվում է, զարգանում, և ամբողջությամբ ստեղծվում է մի հիշարժան նկարագիր: Նա այլ է որպես զինվորական, երբ իր սխրագործություններով Հռոմում արժանանում է բարձր գնահատանքի և օծվում հայոց արքա, այլ է իր գործունեության սկզբում, երբ ազատում է հայոց երկիրն օտարներից և հին աստվածներին հավատարիմ՝ պատժում Գրիգորին: Առանձնահատուկ է նրա կերպարը Հռիփսիմեի դրվագում, ապա՝ կենդանական կերպարանափոխության մեջ, այնուհետև՝ թողություն խնդրելիս և, ի վերջո, իր արժանի նկարագիրը վերականգնելուց հետո:

Այդպես անընդհատ զարգացման մեջ է նաև Գրիգորի կերպարը: Նրան առաջնորդում է քրիստոնեական հավատը, ինչն էլ անշեղ ընթացք է տալիս նրա գործողություններին:

Հոգեբանական բացատրություն է պահանջում այն դրվագը, երբ Գրիգորն իմանալով, որ ինքը պարթև Անակի որդին է, ծպտյալ ծառայության է մտնում Տրդատի մոտ: Գուցե այն պատճառաբանությամբ, որ քավի իր հոր կատարած չարագործության մեղքը: Գրիգորը միշտ պայծառակերպության մեջ է իր գաղափարական վեճերի ժամանակ: Ագաթանգեղոսը հրաշալի է պատկերում նաև լեգենդներով պարուրված նրա կյանքը՝ տանջանքները խոր վիրապում, վերադարձը, հավատարմությունը նահատակված քրիստոնյա կույսերի հիշատակին, հայոց աշխարհը դարձի բերելը, պայքարը հեթանոս աստվածների դեմ, երկիրը հավատի զինվորներով լցնելը, ամենաբարձր հոգևոր դիրքի հասնելը, բայցև, այդքանով հանդերձ, մնալով պարզ քրիստոնյա, որը լեռներում ճգնելն ու պահքը ավելի է գերադասում, քան մայրաքաղաքում աթոռ ունենալը:

Չպետք է մոռանալ, սակայն, որ Գրիգորն ազգությամբ պարթև էր: Պարթև լինելով՝ Գրիգորը սերում էր Արշակունիների տոհմից և այս առումով հայոց Արշակունի արքայատոհմին ազգակից-ցեղակից էր: Քրիստոնեական հավատի էր եկել Կեսարիայում, Հայաստանում հունական և ասորական դպրության տարածող էր և անխնա դաժան վարվեց հայոց հեթանոս աստվածների, նրանց մեհյանների ու բագինների նկատմամբ:

Կարծիք կա նաև, թե Գրիգորը Կեսարիայի հայ է, բայց Կեսարիան այնքան ուժեղ էր կրում հունական ազդեցությունը, որ դեռ այն ժամանակ այդպիսի հայերին համարում էին հոռոմ:

Ուսումնասիրողները հանգում են նաև այն եզրակացության, ըստ որի՝ բացառված չէ, որ Գրիգոր Լուսավորիչը լիներ հայ իշխանական որևէ տնից, Փոքր Հայքի որևէ իշխող տոհմից: Նրա մոր անունը Ոգուհի էր:

Ագաթանգեղոսի շարադրանքի վիպականությունն ուժեղանում է նաև հրաշքի նկարագրություններով ու պատկերավոր խոսքով: Հրաշքը գալիս է թե՛ Աստվածաշնչից և թե՛ մարդու նախնական պատկերացումներից: Հրաշքի առկայությունը միջնադարյան մատենագրության մեջ պետք է դիտել որպես գաղափարական և գեղագիտական ինքնուրույն հասկացություն: ➥ էջ 8

Սուրբ Հարություն

➥ էջ 5

Քրիստոսի հարությունը այն գերագույն ավետիսն էր, որ բանավոր քարոզեցին և գրավոր ավետարանեցին ու վկայեցին առաքյալները (հմմտ. *Թադեոս վրդ. Զիրեկյանց, Աստվածաբանություն ըստ մանրապատկերի. խորհրդածություններ «Հասակավոր երախայից մկրտության կանոն»-ի խրատի 12 կետերի շուրջ*): Քրիստոնյաներս եղանք այդ բարի ավետիսին ականջալուր, և մեր գլխավոր նպատակները դարձան, ինչպես առաքյալն է ասում, Նրան և Նրա հարության զորությունը ճանաչելը, Նրա չարչարանքներին մասնակից, մահվանը կերպարանակից լինելը՝ հասնելու համար մեռելներից հարություն առնելուն (հմմտ. *Փիլիպ. Գ 10—11*):

Յուրաքանչյուր քրիստոնյայի կյանք հարության և հավիտենական կյանքի պատրաստություն է: Սակայն հավիտենական կյանքը միայն մահվանից հետո իրողություն չէ, այլ կյանք է Աստծո հետ, և այն սկսվում է դեռ մարմնական մահից առաջ (հմմտ. *Դանիել պատրիարք, Խնդրություն և հավատարմություն. աստվածաբանական խորհրդածություններ*): Ու եթե ուզում ենք, որ Քրիստոս երկրորդ գալստյան ժամանակ մեզ հարություն տա, պետք է այս կյանքն ապրենք՝ հավատարիմ Աստծո պատվիրաններին, և երկրավոր աշխարհում Փրկչի հրաշափառ հարության քարոզողը լինենք, ինչպես առաքյալներն աներկյուղ քարոզեցին՝ ուրանալով իրենց անձերը: Նրանք բանտարկվեցին, կանգնեցին անգամ մահվան դեմ հանդիման, բայց ոչինչ խոչընդոտ ու արգելք չդարձավ իրենց առաքելության համար: Առաքյալները դարձան Քրիստոսի հարության վկաները, և նրանց վկայության շնորհիվ մեր սրտերում ևս ծագեց հարության լույսը:

Մեր կյանքն իմաստ և նշանակություն չէր ունենա, եթե Քրիստոս հարություն առած չլիներ, և առաքյալն ասում է. «Եթե Քրիստոս հարություն չի առել, իզուր է ձեր հավատը, և տակավին նույն մեղքերի մեջ եք» (*Ա Կորնթ. ժե 17*):

Մի պահ, երբ մտածում ենք այս մասին, վախը պատում է մեզ: Մեր կյանքը կորցնում է իր նշանակությունը, հայտնվում ենք հուսահատության մեջ, անմխիթարական թախիծով ենք պարուրվում: Ամեն բան այլափոխվում է, կորցնում իր իմաստը: Սակայն հուրախություն քրիստոնյաներիս՝ Քրիստոս հարություն է առել և Իր հարությամբ սկիզբ է դրել մարդկության փրկության. «Մեռելներից հարություն է առել Քրիստոս՝ ննջեցյալների առաջին պտուղը. քանզի մի մարդով մահը եղավ, և մի մարդով՝ մեռելների հարություն» (*Ա Կորնթ. ժե 20*):

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց». երբ լսում ենք Սուրբ Հարության այս ավետիսը, մեր հոգիներն ու սրտերը լցվում են անասելի ցնծությամբ, գտնում ենք մեր հոգու և մտքի հանգստությունը: Պատահական չէ, որ Սուրբ Հարությունից առաջ անցում ենք պահեցողության շրջան, ինչը մեզ համար մեծ ապաշխարության և ինքնաքննության հնարավորություն է: Այս ընթացքում կանգնում ենք Տիրոջ առաջ և խնդրում, որ Նա մեզ մաքրի մեր մեղքերից, և Մեծ պահքի օրհնաբեր օրերն անցկացնելով՝ մեղքերից սրբված՝ տոնում ենք արդեն Սուրբ Հարությունը:

Հիսուս Քրիստոսի հարությունն ուշագրավ է պատկերված ոչ միայն Սուրբ Գրքում, այլև համաշխարհային մշակույթում՝ մանավանդ գրականության և կերպարվեստի մեջ: Դեռևս միջնադարում նկարիչներն իրենց կտավներով փորձել են Տիրոջ հարությունը որոշակիացնել պատկերային լայն համակարգով: Քրիստոսի հրաշափառ հարությանը նվիրված բազմաթիվ կտավներ են ստեղծվել, որոնցից առավել հայտնի են Դիրկ Բաուտսի (1410—1475) «Հարություն», Ռաֆայել Սանտիի (1483—1520) «Հիսուսի հարությունը», Պաոլո Վերոնեզեի (1528—1588) «Հարություն», Էլ Գրեկոյի (1541—1614) «Հարություն», Պիտեր-Պաուլ Ռուբենսի (1577—1640) «Քրիստոսի հարությունը», Հանիբալ Կարրաչիի (1560—1609) «Հարություն», Ջովանի Բելինիի (1430—1516) «Հիսուս Քրիստոսի հարությունը», Չեկո դել Կարավաջոյի (1589—1620) «Հարություն» կտավները: Նկարներում հիմնականում պատկերված են Տիրոջ թափուր գերեզմանը, Նրա հրաշափառ հարությունը, գերեզմանը պահպանող զինվորները՝ սարսափած, այսկողմ-այնկողմ ընկած:

Մեծարժեք են նաև հայ ձեռագրական արվեստում Փրկչի հարությանը նվիրված մանրանկարները՝ ստեղծված հայ միջնադարյան վարպետ ծաղկողների կողմից: Դրանցից հայտի են հատկապես Վարդան Բաղիշեցու (*ՄՄ ձեռ. 4845, էջ 7բ*), Աստվածատուր աբեղայի (*ՄՄ ձեռ. 2670, էջ 8ա*), Անանուն Սյունեցու (*ՄՄ ձեռ. 6305, էջ 67բ*) մանրանկարները:

Վարդան Բաղիշեցու մանրանկարում պատկերված է Փրկչի թափուր գերեզմանը, ապա լուսապայծառ հրեշտակն է նստած «ի վերայ վիմին», մանրանկարի աջ կողմում յուղաբեր կանայք են, իսկ պահապանները, որոնք հսկում էին Տիրոջ գերեզմանը, շփոթահար այս ու այն կողմ են նետում իրենց զենքերը:

Աստվածատուր աբեղայի մանրանկարում ևս պատկերված է թափուր գերեզմանը: Գերզմանի աջ կողմում յուղաբեր կանայք են, որոնք եկել են Տիրոջ գերեզմանն օծելու, իսկ ձախ կողմում լուսապայծառ հրեշտակն է: Մանրանկարի ներքևի մասում պահապան զինվորներն են՝ «պահապանք որպէս մեռեալ» գրությամբ:

Անանուն Սյունեցու մանրանկարի ներքևում պատկերված է Հիսուս Քրիստոս՝ պատանքված գերեզմանում, ապա թափուր գերեզմանը՝ իբրև հարության ապացույց: Լուսապայծառ հրեշտակն է պատկերված՝ վեմին նստած, ինչպես նաև՝ յուղաբեր կանայք, որոնցից մեկի ձեռքին յուղի սրվակն է:

Ի տարբերություն նկարիչների գործերի՝ առանձնահատկություններ են դրսևորել միջնադարի հայ բանաստեղծների՝ Հարության տոնին նվիրված տաղերը, որոնցից առավել հայտի է Սուրբ Գրիգոր Նարեկացու «Յարութեան» տաղը: Այստեղ տաղերգուն Քրիստոսին ներկայացնում է սայլի մեջ նստած՝ Մասիս լեռից իջնելիս: Սայլն իջնում է, Նրա առջևում մանուկներն են՝ գրկի մեջ տերունական խաչ, և երգում են. «Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան» (*Գ. Նարեկացի, Տաղեր, Ե., 1957, էջ 62*):

Սուրբ Ներսես Շնորհալի հայրապետը Քրիստոսի հարությունն այսպես է փառաբանել.

Երևեցաւ լոյս յարութեան
Ի խավարի ստուերաց մահու,
Սաւառնացեալ սերովբէին
Նստէր փայլմամբ վերայ վիմին,
Ի ձայն քաղցրիկ փողէր կանանց.
—Յարեաւ խաչեալն Յիսուս
Աստուած,
Եկայք տեսէք զգերեզմանն
Յաստուածային մարմնոյն ունայն:

(Ն. Շնորհալի, Տաղեր և գանձեր, Ե., 1987, էջ 111—112)

Հայաստանում Սուրբ Հարության տոնախմբման մասին է Նաղաշ Հովնաթանի «Տաղ ի վերայ Զատկին Հայոց» ցնծերգը: Ըստ տաղերգուի՝ երբ Հայոց աշխարհում տոնում են Քրիստոսի հրաշափառ հարությունը, բոլորի սրտերն ու հոգիները լցվում են ուրախությամբ, անգամ բնությունն է արթնանում խոր քնից. «կանաչի խոտն և ծաղկի ծառն», «փայլի մանուշակ, բացուի սմպուլն»: Եվ Սուրբ Հարության տոնին Տիրոջ գերեզմանից պայծառ լույս է բխում, որն էլ պետք է փրկի չար գազանից՝ սատանայից: Տաղի վերջում հեղինակը խնդրում է Սուրբ Մարիամ Աստվածածնին՝ բարեխոս լինել հարուցյալ Տիրոջ առաջ՝ մաքրությամբ տոնելու Զատիկն Հայոց.

Յորժամ գայ պայծառ Զատիկն
Հայոց,
Մեծ աւետիս տամք ծերոց
և տղայոց,
Ասեմք՝ Քրիստոս յարեաւ
ի մեռելոց,
Կեանք ննջեցելոց,
Փրկություն հոգւոց է Զատիկն
Հայոց,
Գովեմք Զատիկն Հայոց:

(Ն. Հովնաթան, Տաղեր, Ե., 1983, էջ 218)

Ավանդության համաձայն՝ Մարիամ Մագդաղենացին, Հռոմում ներկայանալով Տիբերիոս կայսերը և վկայելով իր քրիստոնեական հավատը, նրան կարմիր ներկած ձու է նվիրում՝ ասելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Այժմ նույնպես մեր զատկական տոնական սեղանների զարդը կարմիր գույնով ներկված ձվերն են: Ձուն խորհրդանշում է նոր կյանքի սկզբնավորումը, իսկ կարմիր գույնը՝ Հիսուս Քրիստոսի կենդանարար արյունը, որ հեղվեց Գողգոթայում՝ խաչի վրա:

Այսպես՝ Սուրբ Հարության տոնը մեր Տիրոջ հաղթանակն է մահվան նկատմամբ: Նա խաչի վրա Իր կյանքով վճարեց մեզ համար, որպեսզի մենք փրկություն ունենանք, կարողանանք ժառանգել Երկնքի արքայությունը: Տիրոջ փրկագործ տնօրինությունը տեսնելով՝ մեզ մնում է միայն ամրանալ մեր հավատքի մեջ և մեր երկրային կյանքը զարդարել առաքինություններով ու բարի գործերով:

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

Հայոց դարձն ըստ Ագաթանգեղոսի

← էջ 7

Այս դեպքում հրաշքը և՛ բացառիկության արտահայտություն է, և՛ արարչագործ ուժի: Հրաշքն էր, որ ներգործում էր մարդկանց վրա և հոգեպես ու գաղափարապես վերափոխում նրանց:

Ագաթանգեղոսի շարադրանքը հարուստ է նաև պատկերավոր խոսքով: Ահա, օրինակ, Տրդատ թագավորը. «Սրա համար էր, որ պատշաճեցին առակաց կարգի այն խոսքերը, թե՝ «Ինչպես սեգ Տրդատը, որն իր համարձակությամբ ավերեց գետերի թմբերը և իր հանդգնությամբ ցամաքեցրեց ծովերի հորձանքը: Վասնզի իրոք սեգ էր հանդերձանքով և մեծ ուժով, զորությամբ, ամուր ոսկորներով և հաղթ մարմնով, քաջ էր և կատաղի պատերազմող, բարձր ու լայն հասակով»: Ահա նաև այն տեսարանը, երբ Եփրատում Գրիգորը մկրտում է հայ ժողովրդին, և տեղի է ունենում աննախադեպ հրաշքը. «Երբ բոլոր մարդիկ և թագավորը իջնում էին այնտեղ՝ Եփրատ գետի ջրերի մեջ մկրտվելու, Աստծուց սքանչելի հրաշք երևաց, քանզի գետի ջրերը կանգնելով հետ դարձան: Սաստիկ լույս երևաց լուսավոր սյան նման և կանգնեց ջրերի վրա, ու նրա վրա՝ տերունական խաչի կերպարանքը. և լույսն այնքան ծագեց, մինչև որ արգելեց և նվաղեցրեց արեգակի ճառագայթները» (էջ 31–33, 79, 465):

Ագաթանգեղոսի գիրքը բաղկացած է առաջաբանից և չորս գլխից՝ «Սուրբ Գրիգորի վարքը և պատմությունը», «Հռիփսիմյանների վկայաբանությունը», «Սուրբ Գրիգորի վարդապետությունը», «Հայաստան աշխարհիս փրկության դարձը»:

«Սուրբ Գրիգորի վարքը և պատմությունը»: Պարթևների թագավոր Արտավան Արշակունին սպանվում է Սասանի որդի Արտաշիր Պապականի կողմից: Հայոց Խոսրով թագավորը, որը պարսից տերության մեջ երկրորդն էր, հավաքում է աղվանից ու վրաց զորքերը և Արշակունի Արտավանի պատիվը փրկելու համար արշավում Տիզբոն, ավերում Պարսից երկիրը և լուծում «Արտավանի արյան վրեժը»: Խոսրովին չեն օժանդակում Պարսկաստանում մնացած Արշակունիները, որովհետև արդեն «համակերպվել և հնազանդվել էին Արտաշիրի տերությանը»: Հայոց թագավորը «մեծ հաղթությամբ, բազում ավարով» վերադառնում է Վաղարշապատ: Եվ այսպես՝ տասնմեկ տարի շարունակ:

Պարթևների կողմից հայերին հակահարված տալու պատրաստակամությունն ստանձնում է պարթև նահապետ Անակը: Նա եղբոր հետ ընտանիքներով հաստատվում է Հայաստանում և կեղծավորությամբ շահում հայոց Խոսրով արքայի վստահությունը: Խոսրովը գարնանը վերստին պատրաստվում էր արշավել դեպի Պարսկաստան, բայց դավադիր Անակը և նրա եղբայրը սպանում են նրան:

Հայոց զորքը հետապնդում և վարարած Երասխի ափին գետավեժ է անում թշնամիներին: Կոտորում են նրանց տոհմը: Փրկվում են միայն Անակի երկու որդիները՝ «որոնցից մեկին փախցրեցին Պարսից կողմերը, իսկ մյուսին՝ Հունաց»: Պարսից թագավորն իր հերթին հարձակվում և ավերում է հայոց աշխարհը և կոտորում թագավորական տոհմը: Փրկվում է միայն մանուկ արքայազն Տրդատը, որին փախցնում են հունաց կողմերը:

Տրդատը դաստիարակվում է Լիկիանես անունով մի կոմսի մոտ, իսկ Անակի որդին Կեսարիայում «դաստիարակվեց Քրիստոսի երկյուղով, և նա ուսանելով քրիստոնեական դպրության հանգամանքները՝ ընտելացավ Աստվածաշնչին, ճանաչեց Տիրոջ երկյուղը, նրա անունն էր Գրիգոր (Գրիգորիս)»:

Տրդատը պատերազմում հաղթում է Հռոմի ախոյան գոթերին, նրանց թագավորին գերում ու տանում ինքնակալի մոտ: Գոթերի դեմ տարած հաղթանակից հետո Տրդատն օծվում է հայոց թագավոր, վերադառնում Հայաստան, հալածում պարսիկներին և ամրապնդում երկիրը: Անիշխանությունից (261–287) հետո Տրդատը վերականգնում է հայոց թագավորությունը:

Այդ ժամանակ Գրիգորը «դայակներից տեղեկացավ իր հոր կատարած գործերը, ելավ ու գնաց Տրդատին (Տրդատիոս) կամավոր ծառայելու: Թաքցրեց իր անձը և ոչինչ չէր հայտնում...»: Տրդատն զգում է, որ Գրիգորը «հաղորդակից է քրիստոնեական պաշտամունքին», և ամեն կերպ ցանկանում է դա վերացնել: Գահակալության առաջին տարում եկեղյաց գավառի Երիզա ամրոցում Տրդատը Գրիգորին հրամայում է, որ «պսակներ ու ծառերի թավ ճյուղեր նվիրաբերի Անահիտի արձանի բագինին»: Սակայն Գրիգորը, պատճառաբանելով իր քրիստոնյա լինելը, հանձն չի առնում կատարել թագավորի հրամանը: Տրդատը նրան ասում է. «Մի օտարական և անծանոթ մարդ էիր, եկար մեզ միանալու և ինչպես ես համարձակվում պաշտել այն Աստծուն, որին ես չեմ պաշտում»: Գրիգորը պատճառաբանում է իր արարքը և արքային պարզում իր հավատի ճշմարտությունը:

Տրդատ արքայի և Գրիգորի միջև տեղի է ունենում մի մանրամասն զրույց, որի մի կողմում քարեղեն կուռքերն են ու հին աստվածները, մյուս կողմում՝ քրիստոնեական հավատի գաղափարախոսությունը: Գրիգորի համար Աստծու Միածին Որդին «լույսի լույսն է ու կյանքի կյանքը», որ եկել է փոխարինելու սնոտի աստվածների կուռքերին:

Արքայի կարգադրությամբ սկսում են Գրիգորին տանջել, բայց նա երջանիկ է, որովհետև այդ տանջանքների մեջ հոգին ազատագրվում է մարմնից: Սաստիկ փորձություններին Գրիգորը դիմանում է հավատի շնորհիվ: Արքան հարցնում է. «Զարմանալով զարմանում եմ և խիստ շատ, թե ինչպես ես դու կենդանի մնում»: «Տիրոջ շնորհի ուժով և իմ կամքի հոժարությամբ»,– պատասխանում է Գրիգորը:

Տանջանքները դեռևս շարունակվում են, և այստեղ նախարար Տաճատն արքային հայտնում է, որ Գրիգորն Անակի որդին է: Եվ այն պահին, երբ Տրդատն արդեն տրամադիր էր սիրով խոսել մահացու փորձություններին դիմացած Գրիգորի հետ, լսելով այս լուրը, հրամայում է կապկպել Գրիգորին և բանտարկել Արտաշատ քաղաքի բերդի ներքին վիրապում: Այդտեղ Գրիգորը մնում է տասներեք տարի:

Այս ընթացքում Տրդատը փառավոր հաղթանակներ է տանում թշնամիների դեմ՝ «քանդում Պարսից թագավորության երկիրն ու Ասորեստանը»: Իսկ խոր վիրապում հեծող Գրիգորին մի այրի, երազում ստացած հրամանի համաձայն, օրական մի նկանակ հաց է տալիս: Գրիգորը կենդանի է մնում:

Տրդատը հրաման է արձակում հոգածու վերաբերմունք ունենալ հեթանոսական աստվածների՝ Արամազդի, Անահիտի, Վահագնի հանդեպ և պատվել նրանց, իսկ չենթարկվողներին՝ տանջամահ անել: Միևնույն ժամանակ՝ հալածել քրիստոնեությունը:

«Սուրբ Գրիգորի վարդապետությունը» գլուխը, ըստ էության, ինքնուրույն գիրք է և ունի աստվածաբանական բովանդակություն: Այդտեղ համառոտ վերաշարադրված է Հին Կտակարանը՝ սկսած Ադամից: Այնուհետև Քրիստոսի գործունեությունն է՝ քարոզչությունից մինչև խաչելություն, թաղում, հարություն ու համբարձում: Հաջորդում է Քրիստոսի ուսմունքի տարածումը, որ անում են առաքյալները՝ Ավետարանը քարոզելով: Այս հատվածի կարևոր խորհուրդներից մեկը սուրբ խաչի միավորող ուժն է: Եթե Բաբելոնի աշտարակաշինությունը մարդկությանը բաժանեց 72 ազգերի՝ նրանց երթին առաջնորդ կարգելով 72 նահապետի, ապա՝ «խաչելությունից հետո մարդկությունը միավորվեց յոթանասուներկու աշակերտների շնորհիվ»:

«Հայաստան աշխարհիս փրկության դարձը սուրբ նահատակի ձեռքով» գլուխն անմիջապես շարունակում է Հայոց աշխարհում տեղի ունեցող դեպքերի ընթացքը: Այստեղ դեռևս երկար ժամանակ հայոց արքան ներկայանում է վայրի խոզի երևույթով: Ամբոխն ու թագավորը Գրիգորից խնդրում են բժշկել իրենց: Իսկ Գրիգորը նախ բուժում է նրանց բանականությունը, որ ունակ լինեն լսելու իր խոսքը: Իր հետևից եկողների աջակցությամբ նա Հռիփսիմյան կույսերի նահատակության տեղերում կառուցում է վկայարաններ: Գրիգորն սկզբում կյանքի է կոչում Տրդատի ձեռքերն ու ոտքերը, որպեսզի նա մասնակից լինի սրբերի գերեզմանների պատրաստմանը: Նրա հետ են կինը՝ Աշխեն տիկինը, և քույրը՝ օրիորդ Խոսրովիդուխտը: Հայոց արքան Մասիսից մեծամեծ քարեր է բերում սրբերի գերեզմանների համար: Դրանից հետո նա իսպառ ազատվում է իրեն պատուհասած հիվանդությունից և դառնում քրիստոնեության նվիրյալ:

Տրդատ արքան քրիստոնեությունը Հայաստանում հայտարարում է ոչ միայն ազատ, այլև պետական կրոն: Դա 301 թվականն էր, իսկ ըստ որոշ հաշվարկների՝ 299 թվականը: Հաստատուն մնաց 301 թվականը, քանի որ այն ունի իր խորհուրդը և 300 տարի անց համընկնում է Քրիստոսի ծնունդին: Երեք նիշի առկայությունը ևս իր հերթին ամրացնում ու սրբացնում է այդ խորհուրդը:

Հաջորդում է ամբողջ Հայաստանում հեթանոսական տաճարների կործանման և նոր հավատի օջախներ ստեղծելու փուլը: Նախ կործանում են հեթանոսական շրջանի դպրության աստված Արամազդի դպիր Տիր աստծու տաճարը:

Այնուհետև Հայաստանի տարբեր վայրերում ավերում են Անահիտի, Արամազդի, Արամազդի դուստր Նանեի, Վահագնի, Աստղիկի և բոլոր հին աստվածների տաճարներն ու արձանները: Ըստ Ագաթանգեղոսի՝ այդ ավերվող տաճարներում բնակվում էին դևեր, որոնք փախչում են «Կովկաս լեռան բնակիչների մոտ»:

Ավարտվում է հեթանոս քուրմերի ժամանակը, իսկ նրանց որդիներին Գրիգորը քրիստոնյա է դարձնում, եպիսկոպոս կարգում և լծում նոր կրոնի քարոզչությանը: Ամբողջ հայ ժողովուրդը թագավորի գլխավորությամբ սովորում է «ճշմարիտ գիտություն»՝ քրիստոնեական վարդապետություն:

Գալիս է Սուրբ Գրիգոր Լուսավորչին վեհափառ հայրապետ, որ նույնն է՝ կաթողիկոս (օգտագործված են «քահանայապետ», «մեծ արքեպիսկոպոս» բառերը) օծելու ժամանակը: Նա, որպես հայոց եպիսկոպոսապետ, 302 թ. ձեռնադրվում է Կեսարիա քաղաքում՝ ժամանակի քրիստոնյա աշխարհում մեծ ճանաչում ունեցող Ղևոնդիոս եպիսկոպոսի ձեռամբ: Հայաստան վերադառնալով՝ Եփրատ (Արածանի) գետում նա մկրտում է թագավորին և ամբողջ ժողովրդին:

Գրիգոր Լուսավորիչը երիտասարդ տարիքում եղել է զինվորական և ուներ երկու որդի՝ Վրթանես ու Արիստակես, որոնցից առաջինը եղել էր աշխարհական, ապա՝ քահանա, իսկ երկրորդը աստվածապաշտ միայնակյաց էր: Կյանքի վերջին շրջանում Ս. Գրիգոր Լուսավորիչը ճգնում է Դարանաղյաց գավառի Մանյա այրք կոչված վայրում: Վախճանվում է 325 կամ 326 թվականներին: Նրա աճյունը մի հովիվ ամփոփում է Թորդան գյուղում:

Վիթխարի է Ագաթանգեղոսի աշխատության դերը հայ ժողովրդի պատմության մեջ: Այն նոր գաղափարախոսության սկիզբն էր և նոր հոգևոր դարձի ազդարարը: Համաշխարհային հռչակ ունենալով՝ այն անփոխարինելի դեր է ունեցել ամբողջ հայ մատենագրության և հետագա շրջանի գրականության մեջ: Այն նաև սկզբնավորում է մեր գեղարվեստական մտածողությունը. պատմություն լինելով հանդերձ՝ դառնալով առաջին վիպական երկերից մեկը:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բ. գ. դ., պրոֆեսոր

ՏՕՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՊՐԻԼ

- Յիշատակ մեռելոց — *1 ապրիլի*
- Օր յիշատակի բռնադատուած եկեղեցականաց — *6 ապրիլի*
- Աւետումն Ս. Աստուածածնի — *7 ապրիլի*
- Յիշատակ սրբոց նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս Հայոց ցեղասպանութեանն վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց — *24 ապրիլի*
- Տօն Երեւման Ս. Խաչի — *28 ապրիլի*

Աստվածաշունչ՝ գիրք գրոց



ՅԻՍՈՒՍ ԵՐԵՒՈՒՄ Է ՄԱՐԻԱՄ ՄԱԳԴԱԼԵՆԱՑՈՒՆ

(Մատթ. 28.9–10, Մարկ. 16.9–11)

Բայց Մարիամը կանգնած էր գերեզմանի դուրսը ու լաց էր լինում. եւ մինչ դեռ լաց էր լինում, կռացաւ դէպի գերեզմանը եւ տեսաւ երկու հրեշտակներ՝ սպիտակների մէջ, որոնք նստել էին՝ մէկը՝ սնարին, եւ միւսը՝ ոտքերի ծօտ, այնտեղ, ուր Յիսուսի մարմինն էր եղել: Եւ նրան ասացին. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս»: Նա նրանց ասաց. «Որովհետև իմ Տիրոջը գերեզմանից վերցրել են, եւ չգիտեմ՝ նրան ուր են դրել»: Երբ այս ասաց, դէպի յետեւի կողմը դարձաւ եւ տեսաւ Յիսուսին, որ կանգնած էր. բայց չէր իմանում, թէ Յիսուսն է: Յիսուս նրան ասաց. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս, ո՞ւմ ես փնտռում»: Նրան այնպէս թուաց, թէ պարտիզպանն է. եւ ասաց նրան. «Տէ՛ր, եթէ դու ես նրան վերցրել, ասա՛ ինձ՝ ուր ես դրել նրան, որպէսզի ես նրան վերցնեմ»: Յիսուս նրան ասաց՝ Մարիա՛մ: Եւ նա դարձաւ ու եբրայերէն նրան ասաց՝ Ռաբբունի՛ (որ թարգմանւում է՝ վարդապետ): Յիսուս նրան ասաց. «Ինձ մի՛ մօտեցիր, քանի որ դեռ Հօրս մօտ չեմ բարձրացել. ուրեմն գնա՛ դու իմ եղբայրների մօտ ու նրանց ասա՛, որ ես բարձրանում եմ դէպի իմ Հայրը եւ ձեր Հայրը, դէպի իմ Աստուածը եւ ձեր Աստուածը»: Մարիամ Մագդալենացին եկաւ ու աշակերտներին պատմեց, թէ ինքը Տիրոջը տեսել է, եւ նա իրեն այս բաներն է ասել:

Աւետարան ըստ Յովհաննէսի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 4.04.2024 թ.
Տպաքանակը՝ 1265